## Շրջակա միջավայր

### 1.1 Ընդհանուր դրույթներ

**Ներածություն**

«Ընդհանուր դրույթներ» ենթագլխի շրջանակներում ՀՀ օրենսդրությունը հիմնականում չի համապատասխանում ԵՄ երկրորդային օրենսդրության պահանջներին: ՀՀ օրենսդրությունում առկա չէ էկոպիտակի ինստիտուտը, մասնավորապես՝ ապրանքների տարբեր խմբերին էկոպիտակ շնորհելու նպատակով բնապահպանական չափորոշիչների սահմանումը, կազմակերպությունների կողմից կամավոր էկոկառավարում ու էկոաուդիտ իրականացնելու և այլ հարաբերությունների իրավական կարգավորումը և այլն:

ՀՀ օրենսդրության մեջ նկատելի է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության հարաբերությունների ոչ հստակ կանոնակարգումը, որը ևս պայմանավորում է ԵՄ համապատասխան օրենսդրության համապատասխանեցման անհրաժեշտությունը:

ՀՀ օրենսդրության մեջ առկա չէ շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը ապահովող օրենսդրություն, սակայն հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունը միացել է «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկատվության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի կոնվենցիային, անհրաժեշտ է ընդունել այդ կոնվենցիայի դրույթներին համապատասխան օրենսդրություն:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է «Ընդհանուր դրույթներ» ենթագլուխը մինչև 2009 թվականի վերջը համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

**2006 թվական**

2006 թվականին այս ենթագլխի շրջանակներում կարևորելով շրջակա միջավայրի վրա նախագծերի, ծրագրերի ազդեցությունը[1], 2006 թվականի չորրորդ եռամսյակում կմշակվի բնապահպանական պետական փորձաքննության մասին օրենքի նախագիծ:

**2007 թվական**

«Ընդհանուր դրույթներ» ենթագլխի շրջանակներում ԵՄ պահանջներին համապատասխան բնապահպանական տեղեկատվության մատչելիությունը[2] ապահովելու նպատակով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում:

ԵՄ օրենսդրություն պահանջներին համապատասխան բնապահպանական տեղեկատվական կենտրոնի կայացման նպատակով կմշակվի Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների կողմից ՀՀ բնապահպանության նախարարությանը բնապահպանական տեղեկատվություն տրամադրելու կարգը և ներկայացվող տեղեկատվության ցանկը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը[3]:

ԵՄ օրենսդրությանը ՀՀ օրենսդրությունը համապատասխանեցնելու նպատակով՝ կազմակերպությունների կողմից կամավոր էկոկառավարում և էկոաուդիտ իրականացնելու ինստիտուտների հիմնադրումը4 իրականացնելու համար Հայաստանի Հանրապետությունում կմշակվի կազմակերպությունների կողմից կամավոր էկոկառավարում և էկոաուդիտ իրականացնելու մասին օրենքի նախագիծ:

**2008 թվական**

2008 թվականին ընդհանուր դրույթների բնագավառին վերաբերող ՀՀ օրենսդրությունը կհամապատասխանեցվի ԵՄ օրենսդրությանը՝ էկոպիտակավորման ինստիտուտի հիմնադրման բնագավառում, մասնավորապես, օրենսդրությամբ, որը կարգավորում է՝ էկոպիտակի շնորհումը և

---

[1] 2001թ. հունիսի 27-ի ԵԽ և ԵՀ դիրեկտիվ թիվ 2001/42/ EC՝ «Շրջակա միջավայրի վրա որոշ նախագծերի և ծրագրերի ազդեցության գնահատման մասին»:

[2] ՀՀ օրենսդրությունը 2003 թվականի հունվարի 28-ի ԵԽ և ԵՀ դիրեկտիվ թիվ 2003/4/EC՝ «Բնապահպանական տեղեկատվության մատչելիության և թիվ 90/313/EEC դիրեկտիվն ուժը կորցրած ճանաչելու մասին»:

[3] 1990 թ. մայիսի 7-ի ԵՀ որոշում թիվ 1210/90՝ «Եվրոպական բնապահպանական գործակալություն և Եվրոպական բնապահպանական տեղեկատվական ու վերահսկիչ ցանց հիմնելու մասին»:

[4] 2001թ. մարտի 19-ի ԵԽ և ԵՀ որոշում թիվ 761/2001՝ «էկոկառավարման և աուդիտի սխեմաներին կազմակերպությունների մասնավոր մասնակցության վերաբերյալ», 2001թ. սեպտեմբերի 7-ի ԵՀ որոշում թիվ 2001/681/EC՝ «Թիվ 761/2001 որոշումը կիրառելու ուղեցույցի և էկոկառավարման և աուդիտի սխեմաներին կազմակերպությունների կողմից կամավոր մասնակցության մասին»:

շնորհող խորհրդի ստեղծումը, էկոպիտակի ստանալու հայտը և վճարները, էկոպիտակի օգտագործման պայմանների տիպային պայմանագրի ներդնումը, անձնական օգտագործման և շարժական համակարգիչներին էկոպիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչներ սահմանումը[5], զբոսաշրջային կեցության օբյեկտների ծառայություններին էկոպիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչներ սահմանելը[6] և այլն[7]: ԵՄ օրենսդրության վերոհիշյալ պահանջներին ազգային օրենսդրությունը համապատասխանեցնելու նպատակով կմշակվի Էկոպիտակի մասին օրենքի նախագիծ և այլ նորմատիվ իրավական ակտեր:

### 2009 թվական

2009 թվականին առանձին ապրանքներին և ծառայություններին էկոպիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչներ սահմանելու նպատակով ՀՀ օրենսդրությունում կմշակվեն կառավարության հետևյալ որոշումները., մակերևութաակտիվ միջոցներ և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցներին էկոպիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչներ սահմանելու մասին[8], պարարտանյութերին էկոպիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչներ սահմանելու մասին[9], թղթային-անձեռոցիկային ապրանքներին էկո-պիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչներ սահմանելու մասին[10], տեխնիկայի որոշ տեսակներին էկոպիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչներ սահմանելու մասին[11], հատակի կարծր ծածկերին էկո-պիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչներ սահմանելու մասին[12], կոշկեղենին էկոպիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչներ սահմանելու մասին[13], տեքստիլ ապրանքներին էկոպիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչներ սահմանելու մասին[14], պատճենահանման-գրաֆիկական աշխատանքների նկարչության համար նախատեսված թղթին էկոպիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչներ սահմանելու մասին[15], անկողնային ներքնակներին էկո-պիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչներ սահմանելու մասին[16], սենյակային ներկերին և լաքերին էկոպիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչներ սահմանելու մասին[17]:

---

[5] 2001թ. օգոստոսի 22-ի ԵՀ որոշում թիվ 2001/686/EC՝ «Անձնական օգտագործման համակարգիչներին էկոպիտակ շնորհելու բնապահպանական չափանիշներ սահմանելու մասին», 2001թ. օգոստոսի 28-ի ԵՀ որոշում թիվ 2001/687/EC՝ «Միությունում շարժական համակարգիչներին էկոպիտակ շնորհելու բնապահպանական չափանիշներ սահմանելու մասին»:

[6] 2003թ. ապրիլի 14-ի ԵՀ որոշում թիվ 2003/287/EC՝ «Զբոսաշրջային կեցության օբյեկտների ծառայություններին էկոպիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչների սահմանման մասին»:

[7] 2000թ. հուլիսի 17-ի ԵՀ որոշում թիվ 1980/2000՝ «Էկոպիտակ շնորհելու սխեմայի վերաբերյալ», 2000թ. նոյեմբերի 11-ի ԵՀ որոշում թիվ 2000/728/EC՝ «Էկոպիտակ ստանալու հայտի և վճարների մասին», 2000թ. նոյեմբերի 10-ին ԵՀ որոշում թիվ 2000/730՝ «Եվրամիության Էկոպիտակ շնորհող խորհրդի ստեղծման և դրա գործունեության կանոնների մասին», 2000թ. նոյեմբերի 10-ի ԵՀ որոշում թիվ 2000/729/EC՝ «Էկոպիտակի օգտագործման պայմանների տիպային պայմանագրի մասին»,
2000թ. նոյեմբերի 10 ԵՀ որոշում թիվ 2000/731/EC՝ «Էկոպիտակի խորհրդատվական ֆորումի ընթացակարգերի կանոնների մասին», 2001թ. դեկտեմբերի 21-ի ԵՀ որոշում թիվ 2002/18/EC՝ «էկոպիտակի աշխատանքային պլանի մասին»:

[8] 2001թ. հունիսի 27-ի ԵՀ որոշում թիվ 2001/523/EC՝ «Միությունում բոլոր տեսակի մաքրիչներին և սանիտարական սարքավորումների մաքրիչներին էկոպիտակ շնորհելու բնապահպանական չափանիշներ սահմանելու մասին», 2001թ. հուլիսի 19-ի ԵՀ որոշում թիվ 2001/607/EC՝ «Միությունում ամանեղենը ձեռքով լվանալու համար նախատեսված նյութերին էկոպիտակ շնորհելու բնապահպանական չափանիշներ սահմանելու մասին», 2002թ. նոյեմբերի 29-ի ԵՀ որոշում թիվ 2003/31/EC՝ «Ամանեղենի մածուկներին էկոպիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչներ սահմանելու և 1999/427/EC որոշումը փոփոխելու մասին», 2002թ. նոյեմբերի 29-ի ԵՀ որոշում թիվ 2003/200/EC՝ «Լվացքի մածուկներին էկոպիտակ շնորհելու բնապահպանական վերանայվածչափորոշիչներ սահմանելու և թիվ 1999/427/EC որոշումը փոփոխելու մասին»:

[9] 2001թ. սեպտեմբերի 28-ի ԵՀ-ի որոշում թիվ 2001/688/EC՝ «Պարարտանյութերին Միության էկոպիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչներ սահմանելու մասին»:

[10] 2001թ. մայիսի 4-ի ԵՀ որոշում թիվ 2001/405/EC՝ «Միության թղթային-անձեռոցիկային ապրանքներին էկոպիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչներ սահմանելու մասին»:

[11] 2002թ. սեպտեմբերի 9-ի որոշում թիվ 2002/747/EC՝ «Լուսամփոփներին էկոպիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչներ սահմանելու և 1999/568/EC որոշումը փոփոխելու մասին»,
2002թ. մարտի 25-ի ԵՀ որոշում թիվ 2002/255/EC՝ «Միությունում հեռուստացույցներին էկոպիտակ շնորհելու բնապահպանական չափանիշներ սահմանելու մասին», 2001թ. օգոստոսի 28-ի ԵՀ որոշում թիվ 2001/89/EC՝ «Միությունում ամանեղեն լվանալու մեքենաներին էկոպիտակ շնորհելու բնապահպանական չափանիշներ սահմանելու մասին»:

[12] 2002թ. մարտի 25-ի ԵՀ- որոշում թիվ 2002/272/EC՝ «Հատակի կարծր ծածկերին էկոպիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչներ սահմանելու մասին»:

[13] 2002թ. մարտի 18-ի ԵՀ-ի որոշում թիվ 2002/231/EC՝ «Կոշկեղենին էկոպիտակ շնորհելու վերանայված բնապահպանական չափորոշիչներ սահմանելու և թիվ 1999/179/EC որոշումը փոփոխելու մասին»:

[14] 2002. մայիսի 15-ի որոշում թիվ 2002/371/EC՝ «Տեքստիլ ապրանքներին էկոպիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչներ սահմանելու և 1999/178/EC որոշումը փոփոխելու մասին»:

[15] 2002թ. սեպտեմբերի 4-ի ԵՀ որոշում թիվ 2002/741/EC՝ «Պատճենահանման-գրաֆիկական աշխատանքների/ նկարչության համար նախատեսված թղթին էկոպիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչների սահմանման մասին և 1999/554/EC որոշումը փոփոխելու մասին»:

[16] 2002թ. սեպտեմբերի 3-ի ԵՀ որոշում թիվ 2002/740/EC՝ «Անկողնային ներքնակներին էկոպիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչներ սահմանելու և 98/634/EC՝ որոշումը փոփոխելու մասին»:

[17] 2002թ. սեպտեմբերի 3-ի ԵՀ-ի որոշում թիվ 2002/739/EC՝ «Սենյակային ներկերին և լաքերին էկոպիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչների սահմանելու և 1999/10/EC որոշումը փոփոխելու մասին»:

**Ինստիտուցիոնալ կարողություններ**

Ընդունված օրենքների կիրարկումը ապահովելու նպատակով կմշակվի կԿազմակերպությունների կողմից կամավոր էկոկառավարում և էկոաուդիտ իրականացնելու մասին օրենքի նախագիծ:

Ընդհանուր դրույթների բնագավառի օրենսդրության համապատասխանեցումն արդյունավետ իրականացնելու նպատակով ՀՀ բնապահպանության նախարարության մասնագետների համար կկազմակերպվեն վերապատրաստման դասընթացներ, մասնավորապես՝ կազմակերպությունների կողմից կամավոր էկոկառավարում և էկոաուդիտ անցկացնելու վերաբերյալ և էկոպիտակի մասին:

### *1.1.1 Օրենսդրական համապատասխանեցում*

| 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|---|
| NN | Միջոցառում | ԵՄ իրավական աղբյուր | Պատասխանատու մարմին | Ներկայացման ժամկետ | Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր) | Տեխնիկական աջակցություն |
| *2006* | | | | | | |
| 1. | «Բնապահպանական պետական փորձաքննության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | 2001 թվականի հունիսի 27-ի ԵՊ-ի և ԵՀ-ի թիվ 2001/42/ EC դիրեկտիվ «Շրջակա միջավայրի վրա որոշ նախագծերի և ծրագրերի ազդեցության գնահատման մասին» | ՀՀ բնապահպանության նախարարություն (ՀՀ առողջապահության նախարարություն) | 4-րդ եռամսյակ | 30 | Խորհրդատվություն |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 30 | |
| *2007* | | | | | | |
| 2. | «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի մշակում | 2003 թվականի հունվարի 28-ի ԵՊ-ի և ԵՀ-ի դիրեկտիվ թիվ 2003/4/EC «Բնապահպանական տեղեկատվության մատչելիության և թիվ 90/313/EEC դիրեկտիվն ուժը կորցրած ճանաչելու մասին» | ՀՀ բնապահպանության նախարարություն, (ՀՀ առողջապահության նախարարություն) | 2-րդ եռամսյակ | 27 | Խորհրդատվություն, փորձաքննություն |
| 3. | «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների կողմից ՀՀ բնապահպանության նախարարությանը բնապահպանական տեղեկատվություն տրամադրելու կարգը և ներկայացվող տեղեկատվության ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | 1990 թվականի մայիսի 7-ի ԵՀ-ի որոշում թիվ 1210/90 «Եվրոպական բնապահպանական գործակալություն և Եվրոպական բնապահպանական տեղեկատվական ու վերահսկիչ ցանց հիմնելու մասին» | ՀՀ բնապահպանության նախարարություն | 4-րդ եռամսյակ | 15 | Խորհրդատվություն |
| 4. | «Կազմակերպությունների կողմից կամավոր էկո-կառավարում և էկո- | 2001 թվականի մարտի 19-ի ԵՊ-ի և ԵՀ-ի որոշում թիվ | ՀՀ բնապահպանության նախարարություն | 4-րդ եռամսյակ | 50 | Խորհրդատվություն, փորձաքննություն, |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | աուդիտ իրականացնելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | 761/2001, ընդունված 19.03.2001 թվականին՝ «էկո-կառավարման և աուդիտի սխեմաներին կազմակերպությունների մասնավոր մասնակցության վերաբերյալ»<br>2001 թվականի սեպտեմբերի 7-ի ԵՀ-ի որոշում թիվ 2001/681/EC, ընդունված թվականին՝ «Թիվ 761/2001 որոշումը կիրառելու ուղղեցույցի և էկո կառավարման և աուդիտի սխեմաներին կազմակերպությունների կողմից կամավոր մասնակցության մասին» | | | | վերապատրաստում |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 92 | |
| *2008* | | | | | | |
| 5. | «Էկո-պիտակի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | • 2000 թվականի հուլիսի 17-ի ԵՀ-ի որոշում թիվ 1980/2000 «Էկո պիտակ շնորհելու սխեմայի վերաբերյալ»<br>• 2000 նոյեմբերի 11-ի թվականի ԵՀ-ի որոշում թիվ 2000/728/EC «Էկո պիտակ ստանալու հայտի և վճարների մասին»<br>• 2000 թվականի նոյեմբերի 10-ին ԵՀ-ի որոշում թիվ 2000/730 ընդունված «Եվրոմիության Էկո-պիտակ շնորհող խորհրդի ստեղծման և դրա գործունեության կանոնների մասին»<br>• 2000 թվականի նոյեմբերի 10-ի ԵՀ-ի որոշում թիվ 2000/731/EC «Էկո-պիտակի խորհրդատվական ֆորումի ընթացակարգերի կանոնների մասին» | ՀՀ բնապահպանության նախարարություն (ՀՀ առողջապահության նախարարություն) | 1-ին եռամսյակ | 50 | Խորհրդատվություն, փորձաքննություն, վերապատրաստում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | • 2001 թվականի դեկտեմբերի 21-ի ԵՀ-ի որոշում թիվ 2002/18/EC «էկո-պիտակի աշխատանքային պլանի մասին» | | | | |
| 6. | «Էկո-պիտակ շնորհելու կարգը, հայտի ձևը և էկո-պիտակի օգտագործման պայմանների տիպային պայմանագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | • 2000 թվականի նոյեմբերի 11-ի ԵՀ-ի որոշում թիվ 2000/728/EC «Էկո պիտակ ստանալու հայտի և վճարների մասին»<br>• 2000 թվականի նոյեմբերի 10-ի ԵՀ-ի որոշում թիվ 2000/729/EC «Էկո-պիտակի օգտագործման պայմանների տիպային պայմանագրի մասին» | ՀՀ բնապահպանության նախարարություն (ՀՀ առողջապահության նախարարություն) | 2-րդ եռամսյակ | 15 | Խորհրդատվություն, փորձաքննություն, վերապատրաստում |
| 7. | «Անձնական օգտագործման և շարժական համակարգիչներին էկո-պիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչներ սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | • 2001 թվականի օգոստոսի 22-ի ԵՀ-ի որոշում թիվ 2001/686/EC .«Անձնական օգտագործման համակարգիչներին էկո-պիտակ շնորհելու բնապահպանական չափանիշներ սահմանելու մասին»<br>• 2001 թվականի օգոստոսի 28-ի ԵՀ-ի որոշում թիվ 2001/687/EC «Միությունում շարժական համակարգիչներին էկո-պիտակ շնորհելու բնապահպանական չափանիշներ սահմանելու մասին» | ՀՀ բնապահպանության նախարարություն | 4-րդ եռամսյակ | 15 | Խորհրդատվություն, փորձաքննություն, վերապատրաստում |
| 8. | «Զբոսաշրջային կեցության օբյեկտների ծառայություններին էկո-պիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչներ սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | 2003 թվականի ապրիլի 14-ի ԵՀ-ի որոշում թիվ 2003/287/EC «Զբոսաշրջային կեցության օբյեկտների ծառայություններին էկո-պիտակ շնորհելու | ՀՀ բնապահպանության նախարարություն | 4-րդ եռամսյակ | 15 | Խորհրդատվություն, փորձաքննություն, վերապատրաստում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | բնապահպանական չափորոշիչների սահմանման մասին» | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 95 | |
| 2009 | | | | | | |
| 9. | «Մակերևութաակտիվ միջոցներ և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցներին էկո-պիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչներ սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | • 2001 թվականի հունիսի 27-ի ԵՀ-ի որոշում թիվ 2001/523/EC «Միությունում բոլոր տեսակի մաքրիչներին և սանիտարական սարքավորումների մաքրիչներին էկո-պիտակ շնորհելու բնապահպանական չափանիշներ սահմանելու մասին»<br>• 2001 թվականի հուլիսի 19-ի ԵՀ-ի որոշում թիվ 2001/607/EC «Միությունում ամանեղենը ձեռքով լվանալու համար նախատեսված նյութերին էկո-պիտակ շնորհելու բնապահպանական չափանիշներ սահմանելու մասին»<br>• 2002 թվականի նոյեմբերի 29-ի ԵՀ-ի որոշում թիվ 2003/31/EC «Ամանեղենի մածուկներին էկո-պիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչներ սահմանելու մասին և 1999/427/EC որոշումը փոփոխող»<br>• 2002 թվականի նոյեմբերի 29-ի ԵՀ-ի որոշում թիվ 2003/200/EC «Լվացքի մածուկներին էկո-պիտակ շնորհելու բնապահպանական վերանայվածչափորոշիչներ սահմանելու մասին և թիվ 1999/427/EC որոշումը փոփոխող» | ՀՀ բնապահպանության նախարարություն | 1-ին եռամսյակ | 30 | Խորհրդատվություն, փորձաքննություն, վերապատրաստում |
| 10. | «Պարարտանյութերին էկո-պիտակ | 2001 թվականի սեպտեմբերի | ՀՀ բնապահպանության | 1-ին եռամսյակ | 15 | Խորհրդատվություն, |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | շնորհելու բնապահպանական չափորոշիչներ սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | 28-ի ԵՀ-ի որոշում թիվ 2001/688/EC «Պարարտանյութերին Միության էկո-պիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչներ սահմանելու մասին» | նախարարություն (ՀՀ գյուղատնտեսության նախարարություն) | | | փորձաքննություն, վերապատրաստում |
| 11. | «Թղթային-անձեռոցիկային ապրանքներին էկո-պիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչներ սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | 2001 թվականի մայիսի 4-ի ԵՀ-ի որոշում թիվ 2001/405/EC «Միության թղթային-անձեռոցիկային ապրանքներին էկո-պիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչներ սահմանելու մասին» | ՀՀ բնապահպանության նախարարություն | 1-ին եռամսյակ | 15 | Խորհրդատվություն, փորձաքննություն, վերապատրաստում |
| 12. | «Տեխնիկայի որոշ տեսակներին էկո-պիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչներ սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | • 2002 թվականի սեպտեմբերի 9-ի որոշում թիվ 2002/747/EC «Լուսամփոփներին էկո-պիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչների սահմանման մասին և 1999/568/EC որոշումը փոփոխող»<br>• 2002 թվականի մարտի 25-ի ԵՀ-ի որոշում թիվ 2002/255/EC «Միությունում հեռուստացույցներին էկո-պիտակ շնորհելու բնապահպանական չափանիշների սահմանման մասին»<br>• 2001 թվականի օգոստոսի 28-ի ԵՀ-ի որոշում թիվ 2001/689/EC «Միությունում ամանեղեն լվանալու մեքենաներին էկո-պիտակ շնորհելու բնապահպանական չափանիշների սահմանման մասին» | ՀՀ բնապահպանության նախարարություն | 1-ին եռամսյակ | 15 | Խորհրդատվություն, փորձաքննություն, վերապատրաստում |
| 13. | «Հատակի կարծր ծածկերին էկո-պիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչներ սահմանելու մասին» ՀՀ | 2002 թվականի մարտի 25-ի ԵՀ-ի րոշում թիվ 2002/272/EC «Հատակի կարծր ծածկերին | ՀՀ բնապահպանության նախարարություն | 1-ին եռամսյակ | 15 | Խորհրդատվություն, փորձաքննություն, վերապատրաստում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | կառավարության որոշման նախագծի մշակում | էկո-պիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչների սահմանման մասին» | | | | |
| 14. | «Կոշկեղենին էկո-պիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչներ սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | 2002 թվականի մարտի 18-ի ԵՀ-ի որոշում թիվ 2002/231/EC «Կոշկեղենին էկո-պիտակ շնորհելու վերանայված բնապահպանական չափորոշիչների սահմանման և թիվ 1999/179/EC որոշումը փոփոխող» | ՀՀ բնապահպանության նախարարություն | 1-ին եռամսյակ | 15 | Խորհրդատվություն, փորձաքննություն, վերապատրաստում |
| 15. | «Տեքստիլ ապրանքներին էկո-պիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչներ սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | 2002 թվականի մայիսի 15-ի որոշում թիվ 2002/371/EC «Տեքստիլ ապրանքներին էկո-պիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչներ սահմանելու մասին և 1999/178/EC որոշումը փոփոխող» | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2-րդ եռամսյակ | 15 | Խորհրդատվություն, փորձաքննություն, վերապատրաստում |
| 16. | «Պտճենահանման-գրաֆիկական աշխատանքների/ նկարչության համար նախատեսված թղթին էկո-պիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչներ սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | 2002 թվականի սեպտեմբերի 4-ի ԵՀ-ի որոշում թիվ 2002/741/EC «Պատճենահանման-գրաֆիկական աշխատանքների/ նկարչության համար նախատեսված թղթին էկո-պիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչների սահմանման մասին և 1999/554/EC որոշումը փոփոխող» | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2-րդ եռամսյակ | 15 | Խորհրդատվություն, փորձաքննություն, վերապատրաստում |
| 17. | «Անկողնային ներքնակներին էկո-պիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչներ սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | 2002 թվականի սեպտեմբերի 3-ի ԵՀ-ի որոշում թիվ 2002/740/EC «Անկողնային ներքնակներին էկո-պիտակ շնորհելու բնապահպանական | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2-րդ եռամսյակ | 15 | Խորհրդատվություն, փորձաքննություն, վերապատրաստում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | չափորոշիչներ սահմանելու մասին և 98/634/EC որոշումը փոփոխող» | | | | |
| 18. | «Սենյակային ներկերին և լաքերին էկո-պիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչներ սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | 2002 թվականի սեպտեմբերի 3-ի ԵՀ-ի որոշում թիվ 2002/739/EC «Սենյակային ներկերին և լաքերին էկո-պիտակ շնորհելու բնապահպանական չափորոշիչների սահմանման մասին և 1999/10/EC որոշումը փոփոխող» | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2-րդ եռամսյակ | 15 | Խորհրդատվություն, փորձաքննություն, վերապատրաստում |
| ԸՆ ԴԱՄԵՆԸ | | | | | 165 | |
| | | | | | 382 | |

### 1.1.2 *Ինստիտուցիոնալ կարողություններ*[18]

| 0 | 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|
| NN | Հաստատություն | Վերակազմակերպում | Վերապատրաստման կարիքներ | Տեխնիկական աջակցության կարիքներ |
| 1. | ՀՀ բնապահպանության նախարարություն | | • Կազմակերպությունների կողմից կամավոր էկո-կառավարում և էկո-աուդիտ անցկացնելու վերաբերյալ դասընթացներ(10 օր 2007թվական)<br>• Էկո-պիտակի մասին դասընթացներ (10 օր 2008թվական) | Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն |

[18] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ

## 1.2 Կայուն զարգացման ռազմավարություն

### Ներածություն

Եվրահամայնքի հիմնարար փաստաթղթերից է Ամստերդամի պայմանագիրը, որը հաստատում է կայուն զարգացման սկզբունքը՝ որպես Եվրահամայնքի նպատակներից մեկը և սահմանում է շրջակա միջավայրի պահպանության բարձր աստիճանը՝ որպես բացարձակ գերակայություն:

Դրան առավել արդյունավետ ճանապարհով հասնելու համար Եվրոպական խորհրդարանը և Խորհուրդը ընդունեցին «Կայունությանը ընդառաջ» 1998թ. 24 սեպտեմբերի որոշումը, որում քննվում է կայուն զարգացման և շրջակա միջավայրի վերաբերյալ Եվրահամայնքի քաղաքականության և գործողությունների ծրագիրը[19]: Որոշման մեջ կոչ է արվում ուժեղացնել Եվրահամանքի դերը շրջակա միջավայրի և կայուն զարգացման բնագավառում միջազգային համագործակցության զարգացման գործում:

Համայնքի կառույցները պարտավոր են հաշվի առնել բնապահպանական նկատառումները գործունեության բոլոր այլ ուղղություններում քաղաքականության մշակման ժամանակ: Այդ պարտականությունը հաշվի է առնված Համայնքի տարբեր ակտերում, հատկապես զբաղվածության, էներգետիկայի, գյուղատնտեսության, համագործակցության զարգացման, միասնական շուկայի և այլն:

Կայուն զարգացման ռազմավարության բնագավառում Եվրահամայնքի բազմաքանակ փաստաթղթերից միայն երկուսը ունեն կարգավորիչ բնույթ՝ «Զարգացող երկրների զարգացման գործընթացներում շրջակա միջավայրի (էկոլոգիայի) բաղադրիչի լիակատար ինտեգրացմանը աջակցելու միջոցների մասին» 2000թ. նոյեմբերի 7-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 2493/2000 կանոնակարգը և «Քաղաքների կայուն զարգացման աջակցությանը ուղղված համագործակցության Եվրահամայնքի շրջանակների մասին» 2001թ. հունիսի 27-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 1411/2001/EC որոշումը:

ՀՀ օրենսդրությունում բացակայում է ՀՀ զարգացման գործընթացներում շրջակա մրջավայրի պահպանության բաղադրիչի լիակատար ինտեգրացմանը ուղղակի վերաբերող նորմատիվային ակտ: Դրա հետ մեկտեղ 1998թ. ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել «Շրջակա միջավայրի պահպանության ազգային գործողությունների ծրագիրը» (այսուհետև՝ Ծրագիր), որը կազմված էր Օրակարգ 21-ի պահանջներին համահունչ և նպատակ ուներ նպաստելու Հայաստանի Հանրապետությունում կայուն զարգացման ապահովմանը: Ծրագրի ընդունումից հետո իրականացվել են դրանում ամրագրված բավականին քանակի գործողություններ: Սակայն այսօր Ծրագիրը վերանայման անհրաժեշտություն ունի, որը պայմանավորված է երկրի տնտեսական իրավիճակի փոփոխությամբ և երկրի կողմից միջազգային համագործակցությանը ակտիվ ինտեգրման գործընթացներով, ինչպես նաև Եվրախորհրդարանի և Խորհրդի կողմից վերը նշված 2000թ. նոյեմբերի 7-ի թիվ 2493/2000 կանոնակարգի ընդունմամբ:

ՀՀ օրենսդրությունում բացակայում է նաև Եվրահամայնքի վերը նշված նորմատիվային ակտերից երկրորդին համահունչ քաղաքների կայուն զարգացման աջակցությանը ուղղված համագործակցությանը վերաբերող որևէ նորմատիվային ակտ:

### 2006 թվական

Հաշվի առնելով «Զարգացող երկրների զարգացման գործընթացներում շրջակա միջավայրի պահպանության բաղադրիչի լիակատար ինտեգրացմանը աջակցելու միջոցների մասին» 2000թ. նոյեմբերի 7-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 2493/2000 կանոնակարգը՝ կմշակվի ՀՀ զարգացման գործընթացներում շրջակա միջավայրի պահպանության բաղադրիչի լիակատար ինտեգրացման մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որին պետք է նախորդի շրջակա միջավայրի պահպանության ազգային գործողությունների ծրագրի մշակման համար անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելու համար Եվրամիությանը ներկայացվելիք հիմնավորման մշակման համար առաջարկությունների (հայտի) ներկայացում: Հայտի հիմնավորման աշխատանքները սկսելուց և դրա հետ կապված ամբողջ գործընթացը 2006թ. ավարտելուց հետո միայն հնարավոր կլինի 2007թ. անցնել վերը նշված ծրագրի մշակմանը:

---

[19] 1998թ. սեպտեմբերի 24-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 2179/98/ EC որոշում՝ «Կայունությանը ընդառաջ» «Շրջակա միջավայրի և կայուն զարգացման վերաբերյալ Եվրոպական համայնքի քաղաքականության և գործողությունների ծրագրի քննության ենթարկման վերաբերյալ»::

**2007 թվական**

2007թ. 3-րդ եռամսյակում կսկսվի շրջակա միջավայրի պահպանության ազգային գործողությունների ծրագրի մշակումը, որը կտևի երկու տարի:

Հաշվի առնելով «Քաղաքների կայուն զարգացման աջակցությանը ուղղված համագործակցության Եվրահամայնքի շրջանակների մասին» 2001թ. հունիսի 27-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 1411 /2001 /EC որոշումը՝ կմշակվի «Քաղաքների կայուն զարգացման աջակցությանը ուղղված համագործակցության Եվրահամայնքի շրջանակների մասին» 2001թ. հունիսի 27-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 1411/2001/EC որոշմամբ նախատեսված համագործակցությանը Հայաստանի Հանրապետության մասնակցության վերաբերյալ միջազգային պայմանագրի նախագիծ:

Կկազմակերպվեն նաև կայուն զարգացման ապահովման աջակցման հիմնահարցերով Եվրամիության և անդամ երկրների համագործակցության ուժեղացման վերաբերյալ դասընթացներ:

2007-2008թթ. մշակման համար նախատեսված շրջակա միջավայրի պահպանության ազգային գործողությունների ծրագրի ավարտից հետո 2008թ. 4-րդ եռամսյակում կմշակվի նշված Ազգային ծրագրի հաստատման մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

**Ինստիտուցիոնալ կարողություններ**

Կայուն զարգացման բնագավառի օրենսդրության համապատասխանեցումն արդյունավետ իրականացնելու նպատակով, ինչպես նաև ընդունված օրենսդրական փաստաթղթերի կիրարկումն ապահովելու նպատակով ՀՀ բնապահպանության, ՀՀ քաղաքաշինության, ՀՀ տարածքային կառավարման և այլ շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների մասնագետների համար կկազմակերպվեն վերապատրաստման դասընթացներ, մասնավորապես՝ զարգացող երկրների զարգացման գործընթացներում շրջակա միջավայրի բաղադրիչի լիակատար ինտեգրացման վերաբերյալ, շրջակա միջավայրի պահպանության ազգային գործողությունների ծրագրի հետ կապված՝ Եվրոպական Միությանը ներկայացվելիք առաջարկության (հայտի) մշակման վերաբերյալ, շրջակա միջավայրի պահպանության ազգային գործողությունների ծրագրի մշակման վերաբերյալ, քաղաքների կայուն զարգացման հիմնահարցերով, ինչպես նաև թիվ 1411/2001EC որոշմամբ նախատեսված շրջանակներում համագործակցության վերաբերյալ:

*1.2.1 Քաղաքականության համապատասխանեցում*

| 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|---|
| NN ը/կ | Միջոցառում | ԵՄ իրավական աղբյուր | Պատասխանատու մարմին | Ներկայացման ժամկետ | Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր) | Տեխնիկական աջակցություն |
| *2006* | | | | | | |
| 1 | • «ՀՀ զարգացման գործընթացներում շրջակա միջավայրի պահպանության բաղադրիչի լիակատար ինտեգրացման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում<br>• «Շրջակա միջավայրի պահպանության ազգային գործողությունների ծրագրի» մշակման համար անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ Եվրոպական Միությանը ներկայացվելիք հիմնավորման մշակման համար առաջարկության (հայտի) ներկայացում<br>• «Շրջակա միջավայրի պահպանության ազգային գործողությունների ծրագրի» մշակման համար հիմնավորման մշակում | «Զարգացող երկրների զարգացման գործընթացներում շրջակա միջավայրի պահպանության բաղադրիչի լիակատար ինտեգրացմանը աջակցելու միջոցների մասին» 2000թ. նոյեմբերի 7-ի Եվրոպական Պարլամենտի և Եվրամիության Խորհրդի թիվ 2493/2000 կանոնակարգ | ՀՀ բնապահպանության նախարարություն, (ՀՀ արտաքին գործերի նախարարություն, շահագրգիռ նախարարություններ և գերատեսչություններ) | 4-րդ եռամսյակ | 150 | Խորհրդատվություն |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 150 | |
| *2007* | | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2. | «Շրջակա միջավայրի պահպանության ազգային գործողությունների ծրագրի» մշակում (2 տարվա ընթացքում) | «Զարգացող երկրների զարգացման գործընթացներում շրջակա միջավայրի պահպանության բաղադրիչի լիակատար ինտեգրացմանը աջակցելու միջոցների մասին» 2000թ. նոյեմբերի 7-ի Եվրոպական Պարլամենտի և Եվրամիության Խորհրդի թիվ 2493/2000 կանոնակարգ | ՀՀ բնապահպանության նախարարություն (շահագրգիռ նախարարություններ և գերատեսչություններ) | 3-րդ եռամսյակ | 400 | Խորհրդատվություն, փորձաքննություն |
| 3. | • «Քաղաքների կայուն զարգացման աջակցությանը ուղղված համագործակցության Եվրահամայնքի շրջանակների մասին» 2001թ. հունիսի 27-ի Եվրոպական Պառլամենտի և Եվրամիության Խորհրդի թիվ 1411/2001/EC որոշմամբ նախատեսված համագործակցությանը Հայաստանի Հանրապետության մասնակցության վերաբերյալ» միջազգային պայմանագրի նախագծի մշակում<br>• «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում<br>• «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքից բխող ենթաօրոնսդրական ակտերում փոփոխությունների և լրացումների մշակելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | «Քաղաքների կայուն զարգացման աջակցությանը ուղղված համագործակցության Եվրահամայնքի շրջանակների մասին» 2001թ. հունիսի 27-ի Եվրոպական Պարլամենտի և Եվրամիության Խորհրդի թիվ 1411/2001/EC որոշում | ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ( ՀՀ քաղաքաշինության նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն շահագրգիռ նախարարություններ և գերատեսչություններ) | 4-րդ եռամսյակ | 100 | Խորհրդատվություն, փորձաքննություն |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 500 | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 650 | |

*1.2.2. Ինստիտուցիոնալ կարողություններ*[20]

| 0 | 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|
| NN ը/կ | Հաստատություն | Վերակազմակերպում | Վերապատրաստման կարիքներ | Տեխնիկական աջակցության կարիքներ |
| 1. | ՀՀ բնապահպանության նախարարություն,<br>ՀՀ քաղաքաշինության նախարարություն,<br>ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն,<br>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն,<br>ՀՀ էներգետիկայի նախարարություն,<br>ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն,<br>ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | - | «Զարգացող երկրների զարգացման գործընթացներում շրջակա միջավայրի պահպանության բաղադրիչի լիակատար ինտեգրացման վերաբերյալ» դասընթացներ (10 օր / 2006թ.) | Խորհրդատվություն |
| 2. | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ առողջապահության նախարարություն | - | «Շրջակա միջավայրի պահպանության ազգային գործողությունների ծրագրի» հետ կապված Եվրոպական Միությանը ներկայացվելիք առաջարկության (հայտի) մշակման վերաբերյալ դասընթացներ (3 օր, 2006թ.) | Խորհրդատվություն |
| 3. | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ առողջապահության նախարություն | - | «Շրջակա միջավայրի պահպանության ազգային գործողությունների ծրագրի» մշակման վերաբերյալ դասընթացներ (5 օր, 2007թ.) | Խորհրդատվություն |
| 4. | ՀՀ արտաքին գործերի նախարարություն,<br>ՀՀ բնապահպանության նախարարություն,<br>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն,<br>ՀՀ քաղաքաշինության նախարարություն<br>ՀՀ առողջապահության նախարարություն | - | «Քաղաքների կայուն զարգացման թիվ 1411/2001/EC որոշմամբ նախատեսված շրջանակներում համագործակցության վերաբերյալ դասընթացներ (5 օր / 2007թ.) | Խորհրդատվություն |

[20] Օրենսդրական համապատասխանեցման աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարություններում և գերատեսչություններում կստեղծվի ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանում:

## 2. Թափոնների կառավարում

### Ներածություն

Թափոնների կառավարման բնագավառում ՀՀ օրենսդրությունը հիմնականում չի համապատասխանում ԵՄ օրենսդրության պահանջներին, մասամբ համապատասխանություններ առկա են թափոնների կառավարման, թափոնների բեռնափոխադրումների կարգավորման, միջուկային և ռադիոակտիվ թափոնների փոխադրման ոլորտներում:

Թափոնների կառավարման բնագավառում Եվրամիության օրենսդրությունը կարգավորում է աղբավայրերի կառավարումը, թափոնների հեռացումը, թափոնների հետևանքով առաջացած աղտոտման կանխարգելումը և վերահսկումը, փաթեթավորումը և փաթեթավորումից առաջացած թափոնների կառավարումը, պոլիքլորինացված երկֆինիլների և պոլիքլորինացված եռֆինիլների վերահսկումը, օգտագործման համար ոչ պիտանի մարտկոցների և դրանց տարատեսակների հեռացումը, շահագործման համար ոչ պիտանի փոխադրամիջոցների կառավարումը, գյուղատնտեսական կեղտաջրերի վերահսկումը, տիտանիումի երկօքսիդի հեռացումը, վերահսկումը և աղտոտման նվազեցումը, ինչպես նաև արդյունահանող արդյունաբերությունների թափոնների կառավարումը: Նշված խնդիրները Հայաստանի օրենսդրությունում բացակայում են:

Ծրագրով նախատեսվում է «Թափոնների կառավարում» ենթագլուխը մինչև 2009 թվականը ամբողջովին համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

### 2006 թվական

Վտանգավոր թափոնների դասակարգման և կառավարման կարգավորման[21], ինչպես նաև թափոնների և վտանգավոր թափոնների դասակարգման համար առանձին ցանկ[22] սահմանելու նպատակով կմշակվեն վտանգավոր թափոնների մասին և ԵՄ դասակարգմամբ թափոնների ցանկը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծեր:

Գյուղատնտեսական գործունեության արդյունքում գոյացած աղտոտված ջրերի նստվածքներից շրջակա միջավայրի պաշտպանությունը[23] կազմակերպելու նպատակով կմշակվի գյուղատնտեսությունում օգտագործվող աղտոտված ոռոգման ջրերի նստվածքներից շրջակա միջավայրի, մասնավորապես, հողի պաշտպանության մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

### 2007 թվական

«Շրջակա միջավայր» գլխի շրջանակներում բնապահպանական հիմնախնդիր հանդիսացող՝ հատուկ աղբավայրերի ստեղծման և կառավարման, թափոնները աղբավայրեր ընդունելու սահմանամանափակումների ներդրման և աղբավայրերի գործունեության կարգավորման[24] նպատակով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Տեղական ինքնակառավարման մասին» և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքներում, ինչպես նաև կմշակվի աղբավայրերում թափոններն ընդունելու չափանիշներ և գործընթացներ սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Թափոնների կառավարման բնագավառում 2007 թվականի ընթացքում կհամապատասխանեցվեն նաև «Թափոնների առանձին տեսակներ» բաժնում ներառված եվրոպական դիրեկտիվների զգալի մասը, որոնք մասնավորապես կարգավորում են էլեկտրական և էլեկտրոնային սարքերից առաջացող թափոնների[25] և այդ սարքերում որոշակի վտանգավոր նյութերի պարունակության մակարդակների բացահայտումը և սահմանափակումը[26], շահագործման համար ոչ պիտանի մեքենաների հավաքման և այդ գործընթացների կանոնակարգման համակարգի[27]

---

[21] 1991թ. դեկտեմբերի 12-ի Խորհրդի թիվ 91/689/EEC դիրեկտիվ՝ «Վտանգավոր թափոնների մասին»:

[22] 2000թ. մայիսի 3-ի Հանձնաժողովի թիվ 2000/532 որոշում՝ «Թափոնների ցանկը հաստատող 94/3/EC Խորհրդի դիրեկտիվը փոխարինող, համաձայն թափոնների մասին Խորհրդի թիվ 75/442/EEC դիրեկտիվի Հոդված 1(a)-ի և վտանգավոր թափոնների ցանկը հաստատող Խորհրդի թիվ 94/904/EC որոշման, համաձայն վտանգավոր թափոնների Խորհրդի թիվ 91/689/EEC դիրեկտիվի Հոդված 1(4)-ի»:

[23] 1986թ. հունիսի 12-ի Խորհրդի թիվ 86/278/EEC դիրեկտիվ՝ «Գյուղատնտեսությունում օգտագործվող աղտոտված ոռոգման ջրերի նստվածքներից շրջակա միջավայրի, մասնավորապես հողի պաշտպանության մասին»:

[24] 2002թ. դեկտեմբերի 19-ի Խորհրդի թիվ 2003/33/EC որոշում՝ «Աղբավայրերում թափոնները ընդունելու չափանիշներ և գործընթացներ սահմանելու մասին»:

[25] 2003թ. հունվարի 27-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 2002/96/EC դիրեկտիվ՝ «Էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումներից առաջացած թափոնների մասին»:

[26] 2003թ. հունվարի 27-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 2002/95/EC դիրեկտիվ՝ «Էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումներում որոշակի վտանգավոր նյութերի օգտագործման սահմանափակումների մասին»:

[27] 2000թ. սեպտեմբերի 18-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 2000/53/EC դիրեկտիվ՝ «Շահագործման համար ոչ պիտանի տրանսպորտային միջոցների հեռացման մասին»:

ներդրումը, մարտկոցների, յուղերից առաջացած թափոնների, պոլիքլորինացված բիֆենիլների և պոլիքլորինացված տերֆինիլների շրջակա միջավայր անվնաս հեռացման իրականացումը[28]: ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չեն մեխանիզմներ, որոնք կարգավորում են այս բաժնում ընդգրկված թափոնների տարատեսակները: Այդ նպատակով Հայաստանում կմշակվեն համապատասխան նորմատիվ օրենսդրական ակտեր, մասնավորապես՝ էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումներից առաջացած թափոնների և դրանցում օգտագործվող որոշ վտանգավոր նյութերի համար սահմանափակումներ մցնելու մասին, շահագործման համար ոչ պիտանի տրանսպորտային միջոցների հեռացման մասին, որոշ վտանգավոր նյութեր պարունակող մարտկոցների տարատեսակների հեռացման մասին, տեխնիկական յուղերից առաջացած կամ յուղ պարունակող թափոնների հեռացման մասին և պոլիքլորինացված բիֆենիլների և պոլիքլորինացված տերֆինիլների հեռացման մասին (ՊՔԲ և ՊՔՏ) ՀՀ կառավարության որոշման նախագծերը:

2007 թվականին թափոնների կառավարման բնագավառին վերաբերող ՀՀ օրենսդրությունը կհամապատասխանեցվի նաև ԵՄ օրենսդրության հետևյալ բնագավառներին՝ թափոններ և վտանգավոր թափոններ, թափոնների վիճակագրություն, թափոնների այրում, փաթեթավորում և փաթեթավորումից առաջացած թափոններ:

Առաջնահերթ է համարվում թափոնների, թափոնների աղբավայրերի կառավարման և վիճակագրության[29] գործընթացներին վերաբերող ԵՄ դիրեկտիվներին ՀՀ օրենսդրության համապատասխանեցումը: Այդ հարցը կարգավորելու նպատակով կմշակվի օրենքի նախագիծ, որով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն թափոնների կառավարման բնագավառի համար հիմնարար հանդիսացող «Թափոնների մասին»[30] ՀՀ օրենքում:

ԵՄ օրենսդրության պահանջների համաձայն՝ շրջակա միջավայրի համար թափոնների այրումը[31] հնարավորինս բարենպաստ իրականացնելու նպատակով կմշակվի թափոնների այրման մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

2007 թվականի ընթացքում ՀՀ օրենսդրությունը կհամապատասխանեցվի «Փաթեթավորում և փաթեթավորումից առաջացած թափոններ»[32] բաժնում ընդգրկված բոլոր դիրեկտիվներին, որոնցով կարգավորվում է՝ փաթեթավորման համար նախատեսված պարագաներում ծանր մետաղների խառության թույլատրելի մակարդակների սահմանումը, փաթեթավորման նյութերի իդենտիֆիկացման համակարգի և տվյալների շտեմարանի ստեղծումը և այլն: Հայաստանում այս բացը լրացնելու նպատակով կմշակվեն, փաթեթավորման և փաթեթավորումից առաջացած թափոնների մասին օրենքի նախագիծը և այդ օրենքի կիրարկումն ապահովող միջացառումներին վերաբերող ՀՀ կառավարության որոշման նախագծեր:

**2008 թվական**

2008 թվականին օրենսդրական համապատասխանեցման համար հիմք կհանդիսանան թափոնների բեռնափոխադրումների կարգավորմանը վերաբերող օրենսդրությունը:

---

[28] 1991թ. մարտի 18-ի Խորհրդի թիվ 91/157/EEC դիրեկտիվ՝ «Որոշ վտանգավոր նյութեր պարունակող մարտկոցների և ակումուլյատորների հեռացման մասին»,
1973թ. հունիսի 16-ի Խորհրդի թիվ 75/439/EEC դիրեկտիվ՝ «Յուղից առաջացած թափոնների հեռացման մասին»,
1996թ. սեպտեմբերի 16-ի Խորհրդի թիվ 96/59/EC դիրեկտիվ՝ «Պոլիքլորինացված բիֆենիլների և պոլիքլորինացված տերֆինիլների հեռացման մասին (ՊՔԲ և ՊՔՏ)»:

[29] 1975թ. հուլիսի 15-ի Խորհրդի թիվ 75/442/EC դիրեկտիվ՝ «Թափոնների մասին»,2002թ. նոյեմբերի 25-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 2150/2002 կանոնակարգ՝ «Թափոնների վիճակագրության մասին», 1999թ. ապրիլի 26-ի Խորհրդի թիվ 1999/31/EC դիրեկտիվ՝ «Թափոնների աղբավայրերի մասին»:

[30] ՀՕ-159, 24.11.2004թ.:

[31] 2000թ. դեկտեմբերի 4-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 2000/76/EC դիրեկտիվ՝ «Թափոնների այրման մասին»,
1994թ. դեկտեմբերի 16-ի Խորհրդի թիվ 94/67/EC դիրեկտիվ՝ «Վտանգավոր թափոնների այրման մասին»:

[32] 1994թ. դեկտեմբերի 20-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 94/62/EC դիրեկտիվ՝ «Փաթեթավորման և փաթեթավորումից առաջացած թափոնների մասին», 2001թ. փետրվարի 19-ի Հանձնաժողովի թիվ 97/129/EC որոշում՝ «Փաթեթավորման և փաթեթավորումից առաջացած թափոնների մասին 94/62/EC դիրեկտիվի համաձայն՝ փաթեթավորման նյութերի իդենտիֆիկացման համակարգ ստեղծելու մասին», 1999թ. փետրվարի 8-ի Հանձնաժողովի թիվ 1999/177/EC որոշում՝ «Փաթեթավորման և փաթեթավորումից առաջացած թափոնների մասին 94/62/EC դիրեկտիվի նկատմամբ ծանր մետաղների կոնցետրացիաների մակարդակի հետ կապված պլաստիկ փաթեթավորմանը վերաբերող վերապահում սահմանելու մասին», 2001թ. փետրվարի 19-ի Հանձնաժողովի թիվ 2001/171/EC որոշում՝ «Համաձայն փաթեթավորման և փաթեթավորումից առաջացած թափոնների մասին 94/62/EC դիրեկտիվի, փաթեթավորման նյութերի իդենտիֆիկացման համակարգ ստեղծելու մասին», 1997թ. փետրվարի 3-ի Հանձնաժողովի թիվ 97/138/EC որոշում՝ «Համաձայն փաթեթավորման և փաթեթավորումից առաջացած թափոնների մասին 94/62/EC դիրեկտիվի, տվյալների շտեմարանի հետ կապված ձևաչափեր սահմանելու մասին», 2001թ. հունիսի 28-ի Հանձնաժողովի թիվ 2001/524/EC որոշում՝ «Փաթեթավորման և փաթեթավորումից առաջացած թափոնների մասին 94/62/EC դիրեկտիվի, հետ կապված Եվրոպական Համայնքների պաշտոնական տեղեկագրում EN 13428:2000, EN 13429:2000, EN 13430:2000, EN 13431:2000, EN 13432:2000 ստանդարտների հղումների հրապարակման մասին»:

Թափոնների բեռնափոխադրումների կարգավորմանը[33] վերաբերող ՀՀ օրենսդրությունը Եվրամիության պահանջներին համապատասխանեցնելու նպատակով «ՀՀ վտանգավոր և այլ թափոնների ներմուծումը, արտահանումը և հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրումը կարգավորելու մասին» ՀՀ կառավարության թիվ 97 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին կառավարության որոշման նախագիծ կմշակվի, ինչպես նաև փոխադրումները կարգավորելու նպատակով կմշակվի ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ ստանդարտ բեռնափոխադրման հայտարարագիր ներդնելու վերաբերյալ[34]:

ԵՄ պահանջներին համապատասխան՝ թափոնների այրման գործարանների գործունեությունը շրջակա միջավայրի համար հնարավորինս բարենպաստ կազմակերպելու և մթնոլորտի աղտոտումն նվազեցնելու նպատակով[35] կմշակվի մունիցիպալ թափոնների այրման գործարաններից մթնոլորտի աղտոտման նվազեցման մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

**2009թվական**

2009 թվականին օրենսդրական համապատասխանեցման համար հիմք կհանդիսանան թափոնների կառավարման հետևյալ բնագավառները՝ արդյունաբերական գործունեության հետևանքով առաջացած թափոններ և ռադիոակտիվ թափոնների կառավարում:

Արդյունաբերությունից առաջացած թափոնների հետևանքով շրջակա միջավայրի աղտոտումը, մասնավորապես, մթնոլորտային արտանետումներում որոշ վտանգավոր նյութերի խտությունը վերահսկելու և նվազեցնելու նպատակով[36] Հայաստանի Հանրապետությունում կմշակվեն տիտանիումի երկօքսիդի արդյունաբերությունից առաջացած թափոնների և թափոնների հետևանքով աղտոտումը նվազեցնելու և վերացնելու մասին, մթնոլորտային արտանետումներում դիոքսինների և ֆուրանների խտություն որոշելու համար ներդաշնակեցված չափման մեթոդ ներդնելու մասին և աղտոտման ինտեգրացված կանխման և հսկողության մասին ՀՀ կառավարության որոշման նախագծեր:

Ռադիոակտիվ թափոնների կառավարումը և բեռնափոխադրումների վերահսկումն և կարգավորումը[37] ԵՄ պահանջներին համապատասխանեցնելու նպատակով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքում[38] և «Հայաստանի Հանրապետություն ռադիոակտիվ թափոնների ներմուծման կամ Հայաստանի Հանրապետությունից դրանց արտահանման լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 375-Ն ՀՀ կառավարության որոշման մեջ, ինչպես նաև կմշակվի ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ ռադիոակտիվ նյութերի բեռնափոխադրման մասին:

[33] 1993թ. փետրվարի 1-ի Խորհրդի թիվ 259/93 կանոնակարգ՝ «Եվրահամայնքում թափոնների փոխադրումը, Եվրահամայնքից թափոնների արտահանումը և ներմուծումը վերահսկելու և կարգավորելու մասին»,
1994թ. նոյեմբերի 24-ի Հանձնաժողովի թիվ 94/774/EC որոշում՝ «Եվրահամայնքի շրջանակներում և դրանցից դուրս թափոնների բեռնափոխադրման վերահսկողության և կարգավորման մասին (EEC)No259/93 Խորհրդի կանոնակարգին հղում կատարող ստանդարտ բեռնափոխադրման հայտարարագրի մասին»:

[34] Վտանգավոր և այլ թափոնների ներմուծումը, արտահանումը և հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրումը կարգավորելու վերաբերյալ ստանդարտ բեռնափոխադրման հայտարարագիր ներդնելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

[35] 1989թ. հունիսի 8-ի Խորհրդի թիվ 89/369/EEC դիրեկտիվ՝ «Մունիցիպալ թափոնների այրման նոր գործանններից մթնոլորտի աղտոտման կանխման մասին»,
1989թ. հունիսի 21-ի Խորհրդի թիվ 89/429/EEC դիրեկտիվ՝ «Մունիցիպալ թափոնների այրման առկա գործարաններից մթնոլորտի աղտոտման նվազեցման մասին»:

[36] 1992թ. դեկտեմբերի 15-ի Խորհրդի թիվ 92/112/EEC դիրեկտիվ՝ «Տիտանիումի երկօքսիդի արդյունաբերությունից առաջացած թափոններից աղտոտումը նվազեցնելու և վերացնելու վերաբերյալ ծրագրի ներդաշնակեցման ընթացակարգ»,
1978թ. փետրվարի 20-ի Խորհրդի թիվ 78/176/EEC դիրեկտիվ՝ «Տիտանիումի երկօքսիդի արդյունաբերությունից առաջացած թափոնների մասին»,
1982թ. դեկտեմբերի 3-ի Խորհրդի թիվ 82/883/EEC դիրեկտիվ՝ «Տիտանիումի երկօքսիդի արդյունաբերությունից առաջացած թափոններով վտանգված միջավայրերի վերահսկման և դիտանցի ընթացակարգերի մասին»,
1997թ. ապրիլի 21-ի Հանձնաժողովի թիվ 97/283/EC որոշում՝ «Մթնոլորտային արտանետումներում դիոքսինների և ֆուրանների խտությունը որոշելու համար ներդաշնակեցված չափման մեթոդ՝ համաձայն «Վտանգավոր թափոնների այրման մասին» 94/67/EC դիրեկտիվի, Հոդված 7(2)-ի»:

[37] 1992թ. փետրվարի 3-ի Խորհրդի թիվ 92/3/Euroatom դիրեկտիվ՝ «Ռադիոակտիվ թափոնների բեռնափոխադրման վերահսկողությունը և կարգավորումը անդամ երկրներով, Համայնքի սահմաններից ներս և դուրս»,
1993թ. հոկտեմբերի 1-ի Հանձնաժողովի թիվ 93/552/Euroatom որոշում՝ «Համաձայն 92/3/Euroatom Խորհրդի դիրեկտիվի ռադիոակտիվ թափոնների փոխադրման վերահսկման և կարգավորման ստանդարտ փաստաթուղթ ներդնելու մասին»,
2001թ. հունիսի 27-ի Խորհրդի թիվ 1493/93 կանոնակարգ՝ «Անդամ երկրներով ռադիոակտիվ նյութերի բեռնափոխադրման մասին»:

[38] ՀՕ-289, 01.02.1999թ.:

**Ինստիտուցիոնալ կարողություններ**

Թափոնների կառավարման բնագավառի օրենսդրության համապատասխանեցումն արդյունավետ իրականացնելու նպատակով համապատասխան հաստատությունների մասնագետների համար կկազմակերպվեն վերապատրաստման դասընթացներ, մասնավորապես՝ թափոնների վիճակագրության (ՀՀ ազգային վիճակագրական ծառայության ներկայացուցիչների մասնակցությամբ), ԵՄ-ում թափոնների դասակարգման, թափոնների աղբավայրերի կառավարման (ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչների մասնակցությամբ), թափոնների, նաև վտանգավոր թափոնների այրման (ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչների մասնակցությամբ), փաթեթավորման և փաթեթավորումից առաջացած թափոնների, աղտոտման ինտեգրացված կանխման և հսկողության վերաբերյալ դասընթացներ:

## *2.1 Օրենսդրական համապատասխանեցում*

| 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|---|
| NN ք/կ | Միջոցառում | ԵՄ իրավական աղբյուր | Պատասխանատու մարմին | Ներկայացման ժամկետ | Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր) | Տեխնիկական աջակցություն |
| | | | *2006* | | | |
| 1. | «ԵՄ դասակարգմամբ թափոնների ցանկը հաստատելու մասին« ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | 2000թ. մայիսի 3-ի «Թափոնների ցանկը հաստատող 94/3/EC Խորհրդի դիրեկտիվը փոխարինող, համաձայն թափոնների մասին 75/442/EEC Խորհրդի դիրեկտիվի Հոդված 1(a)-ի և վտանգավոր թափոնների ցանկը հաստատող 94/904/EC Խորհրդի որոշման, համաձայն վտանգավոր թափոնների 91/689/EEC Խորհրդի դիրեկտիվի Հոդված 1(4)-ի» Հանձնաժողովի թիվ 2000/532 որոշում | ՀՀ բնապահպանության նախարարություն | 4-րդ եռամսյակ | 24 | վերապատրաստում փորձաքննություն |
| 2. | «Վտանգավոր թափոնների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | 1991թ. դեկտեմբերի 12-ի «Վտանգավոր թափոնների մասին» Խորհրդի թիվ 91/689/EEC դիրեկտիվ | ՀՀ բնապահպանության նախարարություն (ՀՀ առողջապահության նախարարություն) | 4-րդ եռամսյակ | 24 | փորձաքննություն |
| 3. | «Գյուղատնտեսությունում օգտագործվող աղտոտված ռռոգման ջրերի նստվածքներից շրջակա միջավայրի, մասնավորապես հողի պաշտպանության մասին» կառավարության որոշման նախագծի մշակում | 1986թ. հունիսի 12-ի «Գյուղատնտեսությունում օգտագործվող աղտոտված ռռոգման ջրերի նստվածքներից շրջակա միջավայրի, մասնավորապես հողի պաշտպանության մասին» Խորհրդի թիվ 86/278/EEC դիրեկտիվ | ՀՀ բնապահպանության նախարարություն (ՀՀ գյուղատնտեսության նախարարություն) | 4-րդ եռամսյակ | 24 | փորձաքննություն |
| | | | ԸՆԴԱՄԵՆԸ | | 72 | |
| | | | *2007* | | | |
| 4. | «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում<br>«Աղբավայրերում թափոնները ընդունելու չափանիշներ և գործընթացներ սահմանելու մասին» կառավարության որոշման նախագծի մշակում | 2002թ. դեկտեմբերի 19-ի «Աղբավայրերում թափոնները ընդունելու չափանիշներ և գործընթացներ սահմանելու մասին» Խորհրդի թիվ 2003/33/EC որոշում | ՀՀ բնապահպանության նախարարություն, (ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն) | 1-ին եռամսյակ | 36 | վերապատրաստում փորձաքննություն |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5. | «Էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումներից առաջացած թափոնների և դրանցում օգտագործվող որոշ վտանգավոր նյութերի համար սահմանափակումներ մցնելու մասին» կառավարության որոշման նախագծի մշակում | • 2003թ. հունվարի 27-ի «Էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումներից առաջացած թափոնների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 2002/96/EC դիրեկտիվ<br>• 2003թ. հունվարի 27-ի «Էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումներում որոշակի վտանգավոր նյութերի օգտագործման սահմանափակումների մասին»Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 2002/95/EC դիրեկտիվ | ՀՀ բնապահպանության նախարարություն (ՀՀ առողջապահության նախարարություն) | 1-ին եռամսյակ | 57 | փորձաքննություն |
| 6. | «Շահագործման համար ոչ պիտանի տրանսպորտային միջոցների հեռացման մասին» կառավարության որոշման նախագծի մշակում | 2000թ. սեպտեմբերի 18-ի «Շահագործման համար ոչ պիտանի տրանսպորտային միջոցների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 2000/53/EC դիրեկտիվ | ՀՀ բնապահպանության նախարարություն (ՀՀ առողջապահության նախարարություն) | 1-ին եռամսյակ | 24 | վերապատրաստում փորձաքննություն |
| 7. | «Որոշ վտանգավոր նյութեր պարունակող մարտկոցների տարատեսակների հեռացման մասին» կառավարության որոշման նախագծի մշակում | 1991թ. մարտի 18-ի «Որոշ վտանգավոր նյութեր պարունակող մարտկոցների և ակումուլյատորների մասին» Խորհրդի թիվ 91/157/EEC դիրեկտիվ | ՀՀ բնապահպանության նախարարություն (ՀՀ առողջապահության նախարարություն) | 2-րդ եռամսյակ | 15 | փորձաքննություն |
| 8. | «Տեխնիկական յուղերից առաջացած կամ յուղ պարունակող թափոնների հեռացման մասին» կառավարության որոշման նախագծի մշակում | 1973թ հունիսի 16-ի «Յուղից առաջացած թափոնների հեռացման մասին» Խորհրդի թիվ 75/439/EEC դիրեկտիվ, | ՀՀ բնապահպանության նախարարություն (ՀՀ առողջապահության նախարարություն) | 2-րդ եռամսյակ | 24 | վերապատրաստում , փորձաքննություն |
| 9. | «Պոլիքլորինացված բիֆենիլների և պոլիքլորինացված տերֆինիլների հեռացման մասին (ՊՔԲ և ՊՔՏ)» կառավարության որոշման նախագծի մշակում | 1996թ. սեպտեմբերի 16-ի «Պոլիքլորինացված բիֆենիլների և պոլիքլորինացված տերֆինիլների հեռացման մասին (ՊՔԲ և ՊՔՏ)» Խորհրդի թիվ 96/59/EC դիրեկտիվ | ՀՀ բնապահպանության նախարարություն (ՀՀ առողջապահության նախարարություն) | 2-րդ եռամսյակ | 21 | վերապատրաստում փորձաքննություն |
| 10. | «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում<br>«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում | • 1975թ. հուլիսի 15-ի «Թափոնների մասին» Խորհրդի թիվ 75/442/EC դիրեկտիվ<br>• 1999թ. ապրիլի 26-ի «Թափոնների աղբավայրերի մասին» Խորհրդի թիվ 1999/31/EC դիրեկտիվ<br>• 2002թ. նոյեմբերի 25-ի «Թափոնների վիճակագրության մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 2150/2002 կանոնակարգ | ՀՀ բնապահպանության նախարարություն (ՀՀ առողջապահության նախարրություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն) | 3-րդ եռամսյակ | 108 | փորձաքննություն |
| 11. | «Թափոնների այրման մասին» ՀՀ կառավարությյն որոշման նախագծի մշակում | • 2000թ. դեկտեմբերի 4-ի «Թափոնների այրման մասին»Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 2000/76/EC | ՀՀ բնապահպանության նախարարություն (ՀՀ առողջապահության | 3-րդ եռամսյակ | 100 | վերապատրաստում փորձաքննություն |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | դիրեկտիվ<br>• 1994թ. դեկտեմբերի 16-ի «Վտանգավոր թափոնների այրման մասին» Խորհրդի թիվ 94/67/EC դիրեկտիվ | նախարարություն) | | | |
| 12. | «Փաթեթավորման և փաթեթավորումից առաջացած թափոնների մասին» օրենքի նախագծի մշակում | 1994թ. դեկտեմբերի 20-ի «Փաթեթավորման և փաթեթավորումից առաջացած թափոնների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 94/62/EC դիրեկտիվ | ՀՀ բնապահպանության նախարարություն | 4-րդ եռամսյակ | 15 | վերապատրաստում անձնակազմի համալրում, փորձաքննություն |
| 13. | «Փաթեթավորման և փաթեթավորումից առաջացած թափոնների մասին» օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում (տեխնիկական կանոնակարգ) | • 1997թ. հունվարի 28-ի «Փաթեթավորման և փաթեթավորումից առաջացած թափոնների մասին 94/62/EC դիրեկտիվի համաձայն, փաթեթավորման նյութերի իդենտիֆիկացման համակարգ ստեղծելու մասին» Հանձնաժողովի թիվ 97/129/EC որոշում<br>• 1999թ. փետրվարի 8-ի, «Փաթեթավորման և փաթեթավորումից առաջացած թափոնների մասին 94/62/EC դիրեկտիվի նկատմամբ ծանր մետաղների կոնցետրացիաների մակարդակի հետ կապված պլաստիկ փաթեթավորմանը վերաբերող վերապահում սահմանելու մասին» Հանձնաժողովի թիվ 1999/177/EC որոշում<br>• 2001թ. փետրվարի 19-ի «Փաթեթավորման և փաթեթավորումից առաջացած թափոնների մասին 94/62/EC Դիրեկտիվի նկատմամբ ծանր մետաղների խտության մակարդակի հետ կապված ապակե փաթեթավորմանը վերաբերող վերապահում սահմանելու մասին » Հանձնաժողովի թիվ 2001/171/EC որոշում<br>• 1997թ. փետրվարի 3-ի «Համաձայն փաթեթավորման և փաթեթավորումից առաջացած թափոնների մասին 94/62/EC դիրեկտիվի, տվյալների շտեմարանի հետ կապված ձևաչափեր սահմանելու մասին» Հանձնաժողովի թիվ 97/138/EC որոշում<br>• 2001թ. հունիսի 28-ի «Փաթեթավորման և փաթեթավորումից առաջացած թափոնների մասին 94/62/EC դիրեկտիվի, հետ կապված Եվրոպական Համայնքների Պաշտոնական Տեղեկագրում EN 13428:2000, EN 13429:2000, EN 13430:2000, EN 13431:2000, EN 13432:2000 ստանդարտների հղումների հրապարակման մասին» Հանձնաժողովի թիվ 2001/524/EC որոշում | ՀՀ բնապահպանության նախարարություն | 4-րդ եռամսյակ | 75 | վերապատրաստում անձնակազմի համալրում, փորձաքննություն |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 475 | |
| *2008* | | | | | | |
| 14. | 1995թ. դեկտեմբերի 8-ի «ՀՀ վտանգավոր և այլ թափոնների ներմուծումը, արտահանումը և հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրումը կարգավորելու մասին» ՀՀ կառավարության թիվ 97 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին կառավարության որոշման նախագծի մշակում | 1993թ. փետրվարի 1-ի «Եվրահամայնքում թափոնների փոխադրումը, Եվրահամայնքից թափոնների արտահանումը և ներմուծումը վերահսկելու և կարգավորելու մասին» Խորհրդի թիվ 259/93 կանոնակարգ | ՀՀ բնապահպանության նախարարություն | 1-ին եռամսյակ | 144 | փորձաքննություն |
| 15. | «Վտանգավոր և այլ թափոնների ներմուծումը, արտահանումը և հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրումը կարգավորելու վերաբերյալ ստանդարտ բեռնափոխադրման հայտարարագիր ներդնելու մասին» կառավարության որոշման նախագծի մշակում | 1994թ. նոյեմբերի 24-ի «Եվրոհամայնքի շրջանակներում և դրանցից դուրս թափոնների բեռնափոխադրման վերահսկողության և կարգավորման մասին (EEC)No259/93 Խորհրդի կանոնակարգին հղում կատարող ստանդարտ բեռնափոխադրման հայտարարագրի մասին» Հանձնաժողովի թիվ 94/774/EC որոշում | ՀՀ բնապահպանության նախարարություն, | 2-րդ եռամսյակ | 15 | փորձաքննություն |
| 16. | «Մունիցիպալ թափոնների այրման գործարաններից մթնոլորտի աղտոտման նվազեցման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | • 1989թ. հունիսի 8-ի «Մունիցիպալ թափոնների այրման նոր գործաններից մթնոլորտի աղտոտման կանխման մասին» Խորհրդի թիվ 89/369/EEC:դիրեկտիվ<br>• 1989թ. հունիսի 21-ի «Մունիցիպալ թափոնների այրման առկա գործարաններից մթնոլորտի աղտոտման նվազեցման մասին» Խորհրդի թիվ 89/429/EEC դիրեկտիվ, | ՀՀ բնապահպանության նախարարություն (ՀՀ առողջապահության նախարարություն) | 3-րդ եռամսյակ | 39 | անձնակազմի վերապատրաստում փորձաքննություն |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 198 | |
| 2009 | | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 17. | «Տիտանիումի երկօքսիդի արդյունաբերությունից առաջացած թափոնների և թափոնների հետևանքով աղտոտումը նվազեցնելու և վերացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | • 1992թ. դեկտեմբերի 15-ի «Տիտանիումի երկօքսիդի արդյունաբերությունից առաջացած թափոններից աղտոտումը նվազեցնելու և վերացնելու վերաբերյալ ծրագրի ներդաշնակեցման ընթացակարգ» Խորհրդի թիվ 92/112/EEC դիրեկտիվ<br>• 1978թ. փետրվարի 20-ի «Տիտանիումի երկօքսիդի արդյունաբերությունից առաջացած թափոնների մասին» Խորհրդի թիվ 78/176/EEC դիրեկտիվ<br>• 1982թ. դեկտեմբերի 3-ի «Տիտանիումի երկօքսիդի արդյունաբերությունից առաջացած թափոններով վտանգված միջավայրերի վերահսկման և դիտանցի ընթացակարգերի մասին» Խորհրդի թիվ 82/883/EEC դիրեկտիվ | ՀՀ բնապահպանության նախարարություն | 1-ին եռամսյակ | 57 | փորձաքննություն |
| 18. | «Մթնոլորտային արտանետումներում դիոքսինների և ֆուրանների կոնցենտրացիան որոշելու համար ներդաշնակեցված չափման մեթոդ ներդնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | 1997թ. ապրիլի 21-ի «Մթնոլորտային արտանետումներում դիոքսինների և ֆուրանների կոնցետրացիան որոշելու համար ներդաշնակեցված չափման մեթոդ, համաձայն «Վտանգավոր թափոնների այրման մասին» 94/67/EC դիրեկտիվի, Հոդված 7(2)-ի» Հանձնաժողովի թիվ 97/283/EC որոշում | ՀՀ բնապահպանության նախարարություն | 1-ին եռամսյակ | 15 | փորձաքննություն |
| 19. | «Աղտոտման ինտեգրացված կանխման և հսկողության մասին» կառավարության որոշման նախագծի մշակում | 1996թ. սեպտեմբերի 24-ի «Աղտոտման ինտեգրացված կանխման և հսկողության մասին» Խորհրդի թիվ 96/61/EC դիրեկտիվ | ՀՀ բնապահպանության նախարարություն (ՀՀ առողջապահության նախարարություն) | 2-րդ եռամսյակ | 30 | անձնակազմի վերապատրաստում փորձաքննություն |
| 20. | • «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում<br>• 2005թ. մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետություն ռադիոակտիվ թափոնների ներմուծման կամ Հայաստանի Հանրապետությունից դրանց արտահանման լիցենզավորման կարգը և լիցենզիայի | 1992թ. փետրվարի 3-ի «Ռադիոակտիվ թափոնների բեռնափոխադրման վերահսկողությունը և կարգավորումը Անդամ երկրներով, Համայնքի սահմաններից ներս և դուրս» Խորհրդի թիվ 92/3/Euroatom դիրեկտիվ | ՀՀ բնապահպանության նախարարություն, (ՀՀ էներգետիկայի նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն) | 2-րդ եռամսյակ | 24 | - |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ձևը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 375-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին կառավարության որոշման նախագծի մշակում | | | | | |
| 21. | 2005թ. մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետություն ռադիոակտիվ թափոնների ներմուծման կամ Հայաստանի Հանրապետությունից դրանց արտահանման լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 375-Ն ՀՀ կառավարության որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին կառավարության որոշման նախագծի մշակում | 1993թ. հոկտեմբերի 1-ի «Համաձայն 92/3/Euroatom Խորհրդի դիրեկտիվի ռադիոակտիվ թափոնների փոխադրման վերահսկման և կարգավորման ստանդարտ փաստաթուղթ ներդնելու մասին» Հանձնաժողովի թիվ 93/552/Euroatom որոշում | ՀՀ բնապահպանության նախարարություն, (ՀՀ էներգետիկայի նախարարություն) | 2-րդ եռամսյակ | 15 | - |
| 22. | «Ռադիոակտիվ նյութերի բեռնափոխադրման մասին» կառավարության որոշման նախագծի մշակում | 2001թ. հունիսի 27-ի «Անդամ երկրներով ռադիոակտիվ նյութերի բեռնափոխադրման մասին» Խորհրդի թիվ 1493/93 կանոնակարգ | ՀՀ բնապահպանության նախարարություն (ՀՀ առողջապահության նախարարություն) | 2-րդ եռամսյակ | 15 | - |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 156 | |
| | | | | | 901 | |

## 2.2 Ինստիտուցիոնալ կարողություններ[39]

| 0 | 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|
| NN п/կ | Հաստատություն | Վերակազմակերպում | Վերապատրաստման կարիքներ | Տեխնիկական աջակցության կարիքներ |
| | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ առողջապահության նախարարություն<br>ՀՀ քաղաքաշինության նախարարություն | Բնապահպանական տեսչական մարմնի հզորությունների ամրապնդում 2006-2009թթ | • ԵՄ-ում թափոնների դասակարգման վերաբերյալ դասընթացներ (2006թ. 5օր) {ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչների մասնակցությամբ}<br>• Թափոնների աղբավայրերի կառավարման վերաբերյալ դասընթացներ (2007թ. 10օր) {ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչների մասնակցությամբ}<br>• Թափոնների վիճակագրության վերաբերյալ (2007թ. 2օր) (ՀՀ ազգային վիճակագրական ծառայության ներկայացուցիչների մասնակցությամբ}<br>• Թափոնների, նաև վտանգավոր թափոնների այրման վերաբերյալ դասընթացներ (2007թ. 5օր) {ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչների մասնակցությամբ}<br>• Փաթեթավորման և փաթեթավորումից առաջացած թափոնների վերաբերյալ դասընթացներ (2007թ. 5օր)<br>• Աղտոտման ինտեգրացված կանխման և հսկողության վերաբերյալ դասընթացներ {ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչների մասնակցությամբ} (2009թ. 2օր) | Խորհրդատվություն, փորձաքննություն |

[39] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ

## 3. Աղմուկ

### Ներածություն

Աղմուկը կարգավորող ՀՀ օրենսդրությունը հիմնականում չի համապատասխանում ԵՄ օրենսդրության պահանջներին, բացառություն են կազմում կենցաղային պայմաններում լայն սպառման ապրանքների կիրառման ժամանակ առաջացած աղմուկի չափման մեթոդներին վերաբերող մի քանի դրույթ, որոնք մասամբ համապատասխանում են աղմուկի չափման ԵՄ մեթոդներին, և դրա իրագործման համար պատասխանատու մարմինն է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը, ինչպես նաև «Ավիացիայի մասին»[40] ՀՀ օրենքը, որը նպատակաուղղված է ավիացիայի բնագավառում էկոլոգիական անվտանգության պահպանմանը և ապահովում է Հայաստանի Հանրապետության միջազգային համաձայնագրերին, Քաղաքացիական ավիացիայի միջազգային կոնվենցիայի դրույթներին ՀՀ օրենսդրության համապատասխանեցումը:

Հայաստանի Հանրապետությունում աղմուկի բնագավառում բացակայում է օրենսդրություն, որով կարգավորվում է ավտոմեքենաներից և մոտոցիկլետներից, շինարարությունում օգտագործվող վերամբարձ կռունկներից շինություններից դուրս օգտագործվող սարքավորումներից առաջակող աղմուկը:

Հայաստանի Հանրապետության այս բնագավառի օրենսդրությունում բացակայում է նաև միասնական ակտ, որով պետք է կարգավորվի շրջակա միջավայր համար աղտոտիչ համարվող՝ աղմուկի մակարդակի գնահատումը և կառավարումը:

Ծրագրով նախատեսվում է աղմուկի կարգավորման բնագավառը մինչև 2009 թվականը ամբողջովին համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

### 2007 թվական

2007 թվականին այս Ազգային ծրագրի շրջանակներում աղմուկի բնագավառում օրենսդրական համապատասխանեցման գերակայություն է 2002թ. հունիսի 25-ի «Շրջակա միջավայրի աղմուկի գնահատման և կառավարման մասին» Եվրոպական խորհրդարանի և խորհրդի թիվ 2002/49/EC դիրեկտիվը, քանի որ ազգային օրենսդրությունում բացակայում է այս ոլորտը կարգավորող միասնական ակտ: Այս նպատակով աղմուկի կառավարման և վերահսկման օրենսդրական կարգավորման բացը լրացնելու նպատակով «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին ՀՀ առողջապահության նախարարության հրամանի հիման վրա կմշակվի համապատասխան իրավական ակտի նախագիծ:

2007 թվականի ընթացքում աղմուկի կարգավորման բնագավառում օրենսդրական համապատասխանեցման հիմք կհանդիսանան նաև ԵՄ այն դիրեկտիվները, որոնք կարգավորում են տնային տնտեսություններում և դրսում օգտագործվող սարքավորումներից, ինչպես նաև մեքենաներից արձակվող աղմուկի մակարդակներից:

ՀՀ օրենսդրությունը նախատեսում է մեխանիզմներ տնային տնտեսություններում օգտագործվող սարքավորումներից արձակվող ձայնի չափման և աղմուկի վերահսկման համար[41], սակայն դրանք խիստ տարբերվում են ԵՄ օրենսդրությամբ նախատեսված մեթոդներից: ԵՄ պահանջներին այս ոլորտը համապատասխանեցնելու նպատակով 2002թ. մարտի 6-ի «Կենցաղային պայմաններում լայն սպառման ապրանքների կիրառման ժամանակ ֆիզիկական գործոնների թույլատրելի մակարդակների միջպետական սանիտարական նորմեր և կանոններ N2-III-11 (N 001-96)» ՀՀ առողջապահության նախարարի հրամանի հիման վրա կմշակվի համապատասխան իրավական ակտի նախագիծ:

Ի տարբերություն վերը նշված ոլորտի՝ դրսում օգտագործվող սարքավորումներից արձակված աղմուկի մակարդակի կարգավորումը[42] արտացոլված չէ ՀՀ օրենսդրությունում: Այդ նպատակով կառավարությունը կմշակի համապատասխան իրավական ակտի նախագիծ՝ դրսում օգտագործվող սարքավորումներից առաջացող աղմուկի թույլատրելի մակարդակի մասին:

[40] ՀՕ-327, 20.05.2002թ.:

[41] 1986թ, դեկտեմբերի 1-ի Խորհրդի թիվ 86/594/EEC դիրեկտիվ՝«Տնային տնտեսությունների համար նախատեսված սարքավորումներից արտանետված մթնոլորտային աղմուկի մասին»:

[42] 2000թ. մայիսի 8-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 2000/14/EC դիրեկտիվ՝ «Անդամ երկրների օրենքների մոտարկման մասին՝ կապված դրսում օգտագործվող սարքավորումներից շրջակա միջավայր աղմուկի արտանետման հետ», 1970թ. փետրվարի 6-ի Խորհրդի թիվ 70/157/EEC դիրեկտիվ՝ «Ավտոտրանսպորտային միջոցների խլացուցիչների ձայնի թույլատրելի մակարդակի հետ կապված անդամ երկրների օրենսդրության համապատասխանեցման մասին»:

**2008 թվական**

2008 թվականին մեքենաներից արձակվող աղմուկի մակարդակների կարգավորման բնագավառը ԵՄ օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու նպատակով կմշակվի համապատասխան իրավական ակտի նախագիծ՝ ավտոտրանսպորտային միջոցների խլացուցիչներից արձակվող ձայնի թույլատրելի մակարդակի սահմանման մասին :

**2009 թվական**

ՀՀ օրենսդրությունը ԵՄ պահանջներին համապատասխանեցնելու նպատակով շինարարությունում օգտագործվող վերամբարձ կռունկներից արձակվող աղմուկը շրջակա միջավայրի համար թույլատրելի մակարդակի հասցնելու և վերահսկելու նպատակով[43] կմշակվի վերամբարձ կռունկներից արձակվող աղմուկի թույլատրելի մակարդակը սահմանելու մասին համապատասխան իրավական ակտի նախագիծ:

ՀՀ օրենսդրությամբ հստակ չի կարգավորվում նաև օդանավակայաններից արձակված աղմուկի թույլատրելի մակարդակը, ինչպես նաև ինքնաթիռների համար նախատեսված տեխնիկական պահանջները, որոնք կարող են բացասաբար ազդել շրջակա միջավայրի վրա[44]: ՀՀ օրենսդրությունը ԵՄ օրենսդրությանը համապատասխանեցնելու նպատակով կմշակվի օդանավակայաններում աղմուկի սահմանափակումների մասին և ինքնաթիռների թռիչքների սահմանափակման մասին համապատասխան իրավական ակտերի նախագծերը:

**Ինստիտուցիոնալ կարողություններ**

Աղմուկի բնագավառի օրենսդրության համապատասխանեցումն արդյունավետ իրականացնելու նպատակով ՀՀ առողջապահության և ՀՀ բնապահպանության նախարարությունների մասնագետների համար կկազմակերպվեն վերապատրաստման դասընթացներ:

Տեխնիկական աջակցության շրջանակներում նախատեսել ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության լաբորատոր հզորությունների ամրապնդում:

---

[43] 1984թ. խեպտեմբերի 17-ի Խորհրդի թիվ 84/534դիրեկտիվ՝ «Վերամբարձ կռունկներից արձակվող աղմուկի թույլատրելի մակարդակը սահմանող անդամ պետությունների իրավական ակտերի մոտարկման մասին»:

[44] 2002թ. մարտի 26-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 2002/30/EC դիրեկտիվ՝ «Կանոնների և ընթացակարգերի հիմնադրման մասին՝ կապված Համայնքի օդանավակայաններում աղմուկին առնչվող գործառնական սահմանափակումների հետ», 1992թ. մարտի 2-ի Խորհրդի թիվ 92/14/EEC դիրեկտիվ՝ «Ինքնաթիռների թռիչքների սահմանափակման մասին՝ սահմանված Միջազգային քաղաքացիական ավիացիայի կոնվենցիայով»:

## *3.1 Օրենսդրական համապատասխանեցում*

| 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|---|
| NN ը/կ | Միջոցառում | ԵՄ իրավական աղբյուր | Պատասխանատու մարմին | Ներկայացման ժամկետ | Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր) | Տեխնիկական աջակցություն |
| *2007* | | | | | | |
| 1. | «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 Սանիտարական նորմերը հաստատելու մասին ՀՀ Առողջապահության նախարարության հրաման N138 հիման վրա համապատասխան իրավական ակտի նախագծի մշակում` «Շրջակա միջավայրի աղմուկի կառավարման և գնահատման մասին» | Եվրոպական Պառլամենտի և Եվրոպական Խորհրդի Դիրեկտիվ թիվ 2002/49/EC ընդունված 25.06.2002թ. «Շրջակա միջավայրի աղմուկի գնահատման և կառավարման մասին» | ՀՀ կառավարության կողմից լիազորված համապատասխան մարմին | 2-րդ եռամսյակ | 28 | փորձաքննություն վերապատրաստում |
| 2. | 2002թ. մարտի 6-ի «Կենցաղային պայմաններում լայն սպառման ապրանքների կիրառման ժամանակ ֆիզիկական գործոնների թույլատրելի մակարդակների միջպետական սանիտարական նորմեր և կանոններ N2-III-11 (N 001-96)» ՀՀ առողջապահության նախարարի թիվ 139 հրամանի հիման վրա համապատասխան իրավական ակտի նախագծի մշակում | Խորհրդի Դիրեկտիվ թիվ 86/594/EEC ընդունված 01.12.1986թ .«Տնային տնտեսությունների համար նախատեսված սարքավորումներից արտանետված մթնոլորտային աղմուկի մասին» | ՀՀ կառավարության կողմից լիազորված համապատասխան մարմին | 3-րդ եռամսյակ | 15 | փորձաքննություն |
| 3. | «Դրսում օգտագործվող սարքավորումներից առաջացող աղմուկի թույլատրելի մակարդակի մասին» համապատասխան իրավական ակտի նախագծի մշակում | Եվրոպական Պառլամենտի և Եվրոպական Խորհրդի Դիրեկտիվ թիվ 2000/14/EC ընդունված 08.05.2000թ. «Անդամ երկրների օրենքների մոտարկման մասին` կապված դրսում օգտագործվող սարքավորումներից շրջակա միջավայր աղմուկի արտանետման հետ» | ՀՀ կառավարության կողմից լիազորված համապատասխան մարմին | 4-րդ եռամսյակ | 42 | փորձաքննություն |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 85 | |
| *2008* | | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 4. | «Ավտոտրանսպորտային միջոցների խլացուցիչներից արձակվող ձայնի թույլատրելի մակարդակի սահմանման մասին» համապատասխան իրավական ակտի նախագծի մշակում | Խորհրդի Դիրեկտիվ թիվ 70/157/EEC ընդունված 06.02.1970թ. «Ավտոտրանսպորտային միջոցների խլացուցիչների ձայնի թույլատրելի մակարդակի հետ կապված Անդամ Երկրների օրենսդրության համապատասխանեցման մասին» | ՀՀ կառավարության կողմից լիազորված համապատասխան մարմին | 1-ին եռամսյակ | 15 | փորձաքննություն |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 15 | |
| *2009* | | | | | | |
| 5. | «Վերամբարձ կռունկներից արձակվող աղմուկի թույլատրելի մակարդակը սահմանելու մասին« համապատասխան իրավական ակտի նախագծի մշակում | Խորհրդի դիրեկտիվ թիվ 84/534 ընդունված 17.09.1984թ «Վերամբարձ կռունկներից արձակվող աղմուկի թույլատրելի մակարդակը սահմանող անդամ պետությունների իրավական ակտերի մոտարկման մասին» | ՀՀ կառավարության կողմից լիազորված համապատասխան մարմին | 1-ին եռամսյակ | 15 | փորձաքննություն |
| 6. | «Օդանավակայաններում աղմուկի սահմանափակումների մասին» համապատասխան իրավական ակտի նախագծի մշակում | Եվրոպական Պառլամենտի և Եվրոպական Խորհրդի Դիրեկտիվ թիվ 2002/30/EC ընդունված 26.03.2002թ. «Կանոնների և ընթացակարգերի հիմնադրման մասին՝ կապված Համայնքի օդանավակայաններում աղմուկին առնչվող գործառնական սահմանափակումների հետ» | ՀՀ կառավարության կողմից լիազորված համապատասխան մարմին | 2-րդ եռամսյակ | 15 | փորձաքննություն |
| 7. | «Ինքնաթիռների թռիչքների սահմանափակման մասին» համապատասխան իրավական ակտի նախագծի մշակում | Խորհրդի դիրեկտիվ թիվ 92/14/EEC ընդունված 02.03.1992թ. «Ինքնաթիռների թռիչքների սահմանափակման մասին՝ սահմանված Միջազգային քաղաքացիական ավիացիայի կոնվենցիայով» | ՀՀ կառավարության կողմից լիազորված համապատասխան մարմին | 2-րդ եռամսյակ | 15 | փորձաքննություն |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 45 | |
| | | | | | 145 | |

### *3.2 Ինստիտուցիոնալ կարողություններ*[45]

| 0 | 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|
| NN ը/կ | Հաստատություն | Վերակազմակերպում | Վերապատրաստման կարիքներ | Տեխնիկական աջակցության կարիքներ |
| 1. | ՀՀ առողջապահության նախարարություն<br>ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | Պետական հիգիենիկ և համաճարակային ծառայության հզորությունների ամրապնդում | «Շրջակա միջավայրի աղմուկի կառավարման և գնահատման մասին» դասընթացներ (2007թ. 10օր) | Խորհրդատվություն, փորձաքննություն |

[45] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ

## 4.1 Մթնոլորտային օդի որակ

### Ներածություն

Մթնոլորտային օդի որակի բնագավառում Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությունն ընդգրկում է «Բնության պահպանության մասին օրենսդրության հիմունքները ընդունելու մասին»[46] ՀՀ Գերագույն խորհրդի որոշումը, «Մթնոլորտային օդի պահպանության մասին»[47] ՀՀ օրենքը և այլ նորմատիվ իրավական ակտեր: Նշված իրավական ակտերը, այնուամենայնիվ, ամբողջովին չեն նախատեսում Եվրամիության օրենսդրական պահանջները:

Մթնոլորտային օդի որակի բնագավառում ՀՀ օրենսդրությունը մասամբ համապատասխանում է ԵՄ օրենսդրության պահանջներին: Մթնոլորտային օդի որակի բնագավառում ԵՄ օրենսդրությունում առկա են իրավական ակտեր, որոնք կարգավորում են առանձին աղտոտիչների սահմանային թույլատրելի արտանետումների չափաքանակները և այդ արտանետումների հետ կապված այլ հարցեր: Հարկ է նշել, որ ՀՀ օրենսդրությունում մթնոլորտային առանձին աղտոտիչների հետ կապված հարցերը (սահմանային թույլատրելի չափաքանակները և մի շարք տեխնիկական հարցեր) կարգավորվում են գերատեսչական նորմատիվ ակտերով: Սակայն կարելի է փաստել, որ ՀՀ օրենսդրությունը ավելի մանրամասնորեն է անդրադառնում մթնոլորտային օդի վրա ներգործության գնահատման և հաշվառման հարցերին: ՀՀ օրենսդրությունում հստակ սահմանված են լիազոր մարմինների իրավասությունները (ի տարբերություն դրա՝ ԵՄ ակտերում նշված չեն լիազոր մարմինները, սակայն սահմանվում են վերջիններիս լիազորությունները) արտանետումների համար թույլտվությունների կարգերը: Դրա հետ մեկտեղ ՀՀ օրենսդրությունում առանձին աղտոտիչների և նրանց միացութունների համար սահմանային թույլատրելի նորմերը սահմանվում են գերատեսչական նորմատիվ ակտով: Տվյալ փաստաթուղթը նաև սահմանում է աղտոտող աղբյուրների տեղակայման հետ կապված մի շարք հարցեր, ինչպես նաև հստակ տալիս է ըստ հեռավորությունների սանիտարական գոտիների սահմանումը, ինչպես նաև առանձին աղբյուրների համար տարբեր դասի գոտիների սահմանումը: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է գտնանմերձ օզոնի դիտարկումը և վերը նշված գերատեսչական նորմատիվ ակտի վերանայումը, լրամշակումը և դրա հիման վրա ՀՀ կառավարության որոշման նախագծի պատրաստումը: Առանձին աղտոտիչների դեպքում (ածխածնի մոնօքսիդ) ՀՀ ստանդարտները ավելի խիստ են, քան ԵՄ ստանդարտները, իսկ բենզինի արտանետումների համար ստանդարտների ընդունումը նախատեսված է ԵՄ-ին անդամակցելու պահից (համաձայն ԵՄ համապատասխան կանոնակարգի[48]): Այնուամենայնիվ, տվյալ աղտոտիչների չափաքանակների համապատասխանեցումը ԵՄ նորմերին նույնպես անհրաժեշտ է:

### 2006 թվական

Կարևորելով մթնոլորտային օդի որակի ընդհանուր կարգավորումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը կհամապատասխանեցվի Եվրամիության խորհրդի մի շարք դիրեկտիվների և կանոնակարգերի:

Մասնավորապես, 2006 թվականին 1970 թ. մարտի 20-ի N 70/220 Խորհրդի դիրեկտիվի[49] հիման վրա ավտոտրանսպորտային միջոցներից առաջացած արտանետումների և դրանց չափումների նպատակով կմշակվի ավտոտրանսպորտային միջոցներից գոյացած արտանետումների չափումների կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

### 2007 թվական

Կարևորելով առանձին աղտոտիչների և դրանց միացությունների մթնոլորտային օդ արտանետումների սահմանային թույլատրելի քանակները (ՍԹՔ)՝ նախատեսվում է CH 245-71 գերատեսչական նորմատիվ ակտի[50] հիման վրա մշակել ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որտեղ կվերանայվեն ԵՄ ակտերում թվարկված առանձին աղտոտիչների ՍԹՔ–ները, ինչպես նաև այդ ցանկում որպես աղտոտիչ կներառվի գետնամերձ օզոնը: Տվյալ որոշումը կմշակվի 1985 թ. մարտի 7-ի N85/2003 Խորհրդի դիրեկտիվի[51], 2002 թ. փետրվարի 12-ի N2002/3 Եվրոպական

---

[46] Ն-0350-1, 1991թ. 9 հուլիսի:
[47] ՀՕ-121, 1994թ. 1 նոյեմբերի:
[48] 2000 թ. նոյեմբերի 16-ի N 2000/69 Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ՝ «Մթնոլորտային օդում բենզինի և ածխածնի մոնօքսիդի սահմանային ծավալների պարունակության մասին»:
[49] 1970 թ. մարտի 20-ի N 70/220 Խորհրդի դիրեկտիվ՝ «Ավտոմեքենաների ներքին այրման շարժիչներից գոյացող արտանետումների դեմ ուղղված մթնոլորտային օդի աղտոտվածության չափումների վերաբերյալ»:
[50] CH 245-71 «Արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական նորմեր» գերատեսչական նորմատիվ ակտ:
[51] 1985 թ. մարտի 7-ի N 85/2003 Խորհրդի դիրեկտիվ՝ «Օդի մեջ ազոտի երկօքսիդի պարունակության ստանդարտների մասին»:

խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվի[52] և 2000թ. նոյեմբերի 16-ի N2000/69 Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվի[53] հիման վրա:

2001 թ. հոկտեմբերի 23-ի N2001/81 Խորհրդի դիրեկտիվի[54] հիման վրա նախատեսվում է մշակել մթնոլորտային որոշ աղբյուրներից առաջացած աղտոտիչների արտանետումների որոշման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

Հաշվի առնելով, որ մթնոլորտային օդի որակը կարգավորող ՀՀ գործող օրենսդրության հիմնական օրենքը «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքն է[55], 1996 թ. սեպտեմբերի 27-ի N96/62 Խորհրդի դիրեկտիվի[56] հիման վրա նախատեսվում է մշակել նոր օրենքի նախագիծ, որը ավելի մանրամասնորեն կհստակեցնի ՀՀ կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև պետական լիազոր մարմինների իրավասությունները մթնոլորտային օդի պահպանության բնագավառում, կսահմանի մթնոլորտային օդի որակի գնահատման և կառավարման հիմնախնդիրները և մի շարք այլ հարցեր:

**2009 թվական**

2001 թ. հոկտեմբերի 23-ի N2001/80 Խորհրդի դիրեկտիվի[57] հիման վրա նախատեսվում է մշակել ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որը կկարգավորի կաթսայատներից և այլ հզորություններից առաջացած արտանետումների և նրանց չափաքանակների հարց:

***Ինստիտուցիոնալ կարողություններ***

Մթնոլորտային օդի որակի բնագավառի օրենսդրության համապատասխանեցումն արդյունավետ իրականացնելու նպատակով համապատասխան հաստատությունների մասնագետների համար կկազմակերպվեն վերապատրաստման դասընթացներ, մասնավորապես՝ մթնոլորտային օդի աղտոտման նորմերի հաշվարկման մեթոդաբանության մասին, օդում աղտոտող նյութերի և արտանետումների նորմավորման և հսկողության վերաբերյալ, օդի որակի հսկողության և վերահսկողության վերաբերյալ, օդն աղտոտող նյութերի որոշման, հետազոտությունների կազմակերպման, հետազոտությունների որակի հսկողության համակարգերի վերաբերյալ:

Տեխնիկական աջակցության շրջանակներում, բացի միջազգային խորհրդատվությունից, նախատեսվում է ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության լաբորատոր հզորացում:

---

[52] 2002 թ. փետրվարի 12-ի N 2002/3 Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ՝ «Մթնոլորտային օդում օզոնի պարունակության մասին»:

[53] 2000 թ. նոյեմբերի 16-ի N 2000/69 Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ՝ «Մթնոլորտային օդում բենզինի և ածխածնի մոնօքսիդի սահմանային ծավալների պարունակության մասին»:

[54] 2001 թ. հոկտեմբերի 23-ի N2001/81 Խորհրդի դիրեկտիվ՝ «Ազգային մակարդակով մասնակի մթնոլորտային աղտոտիչների արտանետումների որոշման վերաբերյալ»:

[55] ՀՕ-121, 1994 թ. 1 նոյեմբերի՝ Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք:

[56] 1996 թ. սեպտեմբերի 27-ի N96/62 Խորհրդի դիրեկտիվ՝ «Մթնոլորտային օդի որակի գնահատման և կառավարման մասին»:

[57] 2001 թ. հոկտեմբերի 23-ի N2001/80 Խորհրդի դիրեկտիվ՝ «Մեծ այրման գործարանների կողմից օդի արտանետումների ծավալների սահմանափակման վերաբերյալ»:

### *4.1.1 Օրենսդրական համապատասխանեցում*

| 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|---|
| NN ը/կ | Միջոցառում | ԵՄ իրավական աղբյուր | Պատասխանատու մարմին | Ներկայացման ժամկետ | Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր) | Տեխնիկական աջակցություն |
| | | | *2006* | | | |
| 1. | «Ավտոտրանսպորտային միջոցներից գոյացած արտանետումների չափումների կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | 1970 թ. մարտի 20-ի «Ավտոմեքենաների ներքին այրման շարժիչներից գոյացող արտանետումների դեմ ուղղված մթնոլորտային օդի աղտոտվածության չափումների վերաբերյալ» No 70/220 Խորհրդի դիրեկտիվ, | ՀՀ բնապահպանության նախարարություն (ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն) | 4-րդ եռամսյակ | 36 | միջազգային փորձագետի խորհրդատվություն |
| | | | ԸՆԴԱՄԵՆԸ | | 36 | |
| | | | *2007* | | | |
| 2. | CH 245-71 «Արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական նորմեր» գերատեսչական նորմատիվ ակտի հիման վրա ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | • 1985 թ. մարտի 7-ի «Օդի մեջ ազոտի երկօքսիդի պարունակության ստանդարտների մասին» No 85/2003 Խորհրդի դիրեկտիվ<br>• 2002 թ. փետրվարի 12-ի «Մթնոլորտային օդում օզոնի պարունակության մասին» No 2002/3 Եվրոպական Պառլամենտի և Խորհրդիդիրեկտիվ<br>• 2000 թ. նոեմբերի 16-ի «Մթնոլորտային օդում բենզինի և ածխածնի մոնոքսիդի սահմանային ծավալների պարունակության մասին» No 2000/69 Եվրոպական Պառլամենտի և Խորհրդի դիրեկտիվ | ՀՀ առողջապահության նախարարություն (ՀՀ բնապահպանության նախարարություն) | 2-րդ եռամսյակ | 73 | միջազգային փորձագետի խորհրդատվություն |
| 3. | «Մթնոլորտային որոշ աղբյուրներից առաջացած արտանետումների որոշման | «Ազգային մակարդակով մասնակի մթնոլորտային | ՀՀ բնապահպանության նախարարություն | 3-րդ եռամսյակ | 25 | միջազգային փորձագետի խորհրդատվություն |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | աղտոտիչների արտանետումների որոշման վերաբերյալ» 2001 թ. հոկտեմբերի 23-ի No 2001/81 Խորհրդի դիրեկտիվ | (ՀՀ առողջապահության նախարարություն) | | | |
| 4. | «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | «Մթնոլորտային օդի որակի գնահատման և կառավարման մասին» 1996 թ. սեպտեմբերի 27-ի No 96/62 Խորհրդի դիրեկտիվ | ՀՀ բնապահպանության նախարարություն (ՀՀ առողջապահության նախարարություն) | 4-րդ եռամսյակ | 36 | միջազգային փորձագետի խորհրդատվություն |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 134 | |
| *2009* | | | | | | |
| 5. | «Կաթսայատների և ջերմային ճանապարհով էներգիա արտադրող հզորությունների կողմից մթնոլորտային արտանետումների սահմանափակման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | «Մեծ այրման գործարանների կողմից օդի արտանետումների ծավալների սահմանափակման վերաբերյալ» 2001 թ. հոկտեմբերի 23-ի No 2001/80 Խորհրդի դիրեկտիվ | ՀՀ բնապահպանության նախարարություն (ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ էներգետիկայի նախարարություն ) | 2-րդ եռամսյակ | 46 | տեղական փորձագետների վերապատրաստում միջազգային փորձագետի խորհրդատվություն |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 46 | |
| | | | | | 216 | |

### *4.1.2 Ինստիտուցիոնալ կարողություններ*[58]

| 0 | 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|
| NN ը/կ | Հաստատություն | Վերակազմակերպում | Վերապատրաստման կարիքներ | Տեխնիկական աջակցության կարիքներ |
| 1. | ՀՀ առողջապահության նախարարություն<br>ՀՀ բնապահպանության նախարարություն | ՀՀ առողջապահության նախարարության սանիտարահամաճարակային վերահսկողության ծառայության հզորացում | մթնոլորտային օդի աղտոտման նորմերի հաշվարկման մեթոդաբանության դասընթացներ 5 օր 2007 թ. | միջազգային խորհրդատվություն |
| 2. | ՀՀառողջապահության նախարարություն<br>ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն<br>ՀՀ բնապահպանության նախարարություն | - | • օդում աղտոտող նյութերի և արտանետումների նորմավորման և հսկողության վերաբերյալ տեղական փորձագետների վերապատրաստման դասընթացներ 3 օր 2007 թ.<br>• օդի որակի հսկողության և վերահսկողության վերաբերյալ տեղական փորձագետների վերապատրաստման դասընթացներ 3 օր 2007 թ.<br>• օդում աղտոտող նյութերի որոշման , հետազոտությունների կազմակերպման, հետազոտությունների որակի հսկողության համակարգերի վերաբերյալ տեղական փորձագետների վերապատրաստման դասընթացներ 3 օր 2007թ. | միջազգային խորհրդատվություն |

[58] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ

## 4.2 Շարժիչային տրանսպորտային միջոցներ

### Ներածություն

Շարժիչային տրանսպորտային միջոցների բնագավառը կարգավորող Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությունն ընդգրկում է միայն ՀՀ կառավարության որոշումներ[59] և գերատեսչական նորմատիվ ակտեր[60]: ԵՄ օրենսդրության մեջ այս ենթագլուխը ներառում է նաև կանոնակարգեր, որոնք կարգավորում են բենզինի և դիզելային վառելիքների որակը, նրանցում տարբեր նյութերի պարունակությունը, ինչպես նաև այդ վառելիքների, փաթեթավորման, պահման և տեղափոխման հետ կապված մի շարք հարցեր:

Բենզինի և դիզելային վառելիքի որակի տեսանկյունից ՀՀ օրենսդրությունը հիմնականում համապատասխանում է ԵՄ կանոնակարգերին: ՀՀ կառավարության նշված որոշումները և Հայպետստանդարտի հրամանը, նրանց մեջ օգտագործված հասկացությունները, անվտանգության ցուցանիշները, վառելիքի պահման, տեղափոխման և փաթեթավորման պայմանները համապատասխանում են ԵՄ կանոնակարգերին: Կապար պարունակող բենզինի արգելումը նույնպես սահմանվում է համապատասխան ՀՀ կառավարության որոշմամբ:

ԵՄ օրենսդրությունը նաև ներառում է կանոնակարգեր, որոնք վերաբերում են գյուղատնտեսության, անտառտնտեսության և տարբեր այլ ոլորտներում օգտագործվող տրանսպորտային միջոցներին և սարքերին, ինչպես նաև կարգավորում են դրանց կողմից առաջացած արտանետումները:

### 2007 թվական

Կարևորելով շարժիչային տրանսպորտային միջոցների գործունեության, ինչպես նաև բենզինի և դիզելային վառելիքի որակի ընդհանուր կարգավորումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը կհամապատասխանեցվի Եվրամիության խորհրդի մի շարք դիրեկտիվների և կանոնակարգերի:

«Ներքին այրման շարժիչների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2004 թ. 11 նոյեմբերի N 1592-Ն որոշումը սահմանում է բենզինի և դիզելային վառելիքի դասերը, կիրառման ոլորտները, ինչպես նաև շուկա մուտք գործելու կանոնները, պահման և տեղափոխման հիմնական տեխնիկական պայմանները, վառելիքի օգտագործման ժամանակ շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ պահանջները, վառելիքի որակի համապատասխանության հավաստման ընթացակարգերը և այլն:

2007 թվականին նախատեսվում է վերանայել կառավարության վերը նշված որոշումը՝ համապատասխանեցնելով այն 1998թ. հոկտեմբերի 13-ի N98/70 Խորհրդի կանոնակարգին[61], 1993թ. մարտի 22-ի N93/12 Խորհրդի կանոնակարգին[62] և 1987թ. դեկտեմբերի 3-ի N88/77 Խորհրդի կանոնակարգին[63] :

### 2008 թվական

Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության մեջ առկա են իրավական ակտեր, որոնք սահմանում են վառելիքներին ներկայացվող տեխնիկական պահանջները, փորձարկման մեթոդները, ավտոմոբիլային բենզինի անվտանգությունը բնութագրող որակի ցուցանիշները, դիզելային վառելիքի անվտանգության ցուցանիշները և այլն: Սակայն այդ իրավական ակտերում մանրամասնեցված չեն բենզինի պահման և տերմինալներից տեղափոխման պայմանները, ինչպես նաև ՀՀ օրենսդրության մեջ բացակայում են իրավական ակտեր, որոնք սահմանում են տարբեր ոլորտներում օգտագործվող տեխնիկական միջոցների շահագործման ժամանակ արտանետումների ծավալները, ինչպես նաև տարբեր սարքերում օգտագործվող օրգանական լուծույթներից առաջացած ցնդող միացությունների արտանետումները:

---

[59] 2000 թ. դեկտեմբերի 31-ի N 902 ՀՀ կառավարության որոշում՝ «ՀՀ մաքսային սահմանով ըստ մաքսային ռեժիմների առանձին ապրանքների տեղափոխումն արգելելու մասին»,,
2004 թ. նոյեմբերի 11-ի N 1592-Ն ՀՀ կառավարության որոշում՝ «Ներքին այրման շարժիչների տեխնիկական կանոնակարգը հաստատելու և ՀՀ կառավարության 1999 թ. 31-ը դեկտեմբերի 799 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:,

[60] 2001թ. հունիսի 15-ը N 22-Վ Հայպետստանդարտի հրաման՝ «Ներքին այրման շարժիչների վառելիքների անվտանգության ցուցանիշները, փորձարկման մեթոդները և դրանց պահման, փոխադրման, իրացման ու օգտագործման փուլերում անվտանգության ապահովման և շրջակա միջավայրի պահպանման պահանջները հաստատելու մասին»:, :

[61] 1998թ. հոկտեմբերի 13-ի Խորհրդի կանոնակարգ N 98/70՝ «Բենզինի և դիզելային վառելիքի որակի վերաբերյալ»:

[62] 1993 թ. մարտի 22-ի Խորհրդի կանոնակարգ N 93/12՝ «Դիզելային վառելիքում ծծմբի պարունակության վերաբերյալ»:

[63] 1987 թ. դեկտեմբերի 3-ի Խորհրդի կանոնակարգ N 88/77՝ «Դիզելային վառելիքով աշխատող ավտոմեքենաներից գոյացող արտանետումների դեմ ուղղված մթնոլորտային օդի աղտոտվածության չափումների վերաբերյալ»:

Այսպիսով նախատեսվում է 2001թ. հունիսի 15-ի Հայպետստանդարտի N 22-Վ հրամանի[64] հիման վրա մշակել ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ համապատասխանեցնելով այն ԵՄ 1994 թ. դեկտեմբերի 20-ի N 94/63 Խորհրդի դիրեկտիվին[65]: Ինչ վերաբերում է տարբեր ոլորտներում և սարքերում օգտագործվող օրգանական միացություններից առաջացած արտանետումներին, ապա 2000 թ. մայիսի 22-ի N2000/25 Խորհրդի կանոնակարգի[66] և 1997թ. դեկտեմբերի 16-ի N 97/68 Խորհրդի դիրեկտիվի[67] նորմերի համաձայն, կմշակվի ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ ներքին այրման շարժիչներից արտանետումների չափումների և դրանց դեմ կանխող գործողությունների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին: 1999թ. մարտի 13-ի N 1999/13 Խորհրդի դիրեկտիվի[68] հիման վրա կմշակվի օրգանական միացությունների արտանետումների սահմանափակումների հաստատման մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

### Ինստիտուցիոնալ կարողություններ

Մթնոլորտային օդի որակի բնագավառի «Շարժիչային տրանսպորտային միջոցներ» բաժնի օրենսդրության համապատասխանեցումն արդյունավետ իրականացնելու նպատակով համապատասխան հաստատությունների մասնագետների համար կկազմակերպվեն վերապատրաստման դասընթացներ, մասնավորապես՝ ներքին այրման շարժիչներից առաջացած արտանետումների որոշման մեթոդաբանության, բենզինի և դիզելային վառելիքի որակի, պահման, տեղափոխման պայմանների և էկոպիտակավորման վերաբերյալ:

ՀՀ օրենսդրության մեջ բացակայում են էկոպիտակավորման վերաբերյալ իրավական ակտեր: ԵՄ օրենսդրության մեջ առկա են մի շարք կանոնակարգեր, որոնք նախատեսում են տարբեր միջոցառումների և ծառայությունների էկոպիտակավորում, դրանց շարքում է նաև 1999թ. դեկտեմբերի 13-ի N 82/884 Խորհրդի կանոնակարգը[69]: Վերջինս սահմանում է վարձակալությամբ տրվող փոխադրամիջոցների վրա զտիչների տեղադրման դեպքում էկոպիտակների տեղադրումը և դրա հետ կապված մի շարք գործողություններ: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանը չունի Կիոտոյի արձանագրությամբ սահմանված պարտավորություններ $CO_2$ արտանետումների նվազեցման վերաբերյալ վերը նշված ԵՄ իրավական ակտի մոտարկումը կամ դրա հիման վրա նոր ակտի մշակումը ՀՀ օրենսդրության մեջ նպատակահարմար չէ:

Այնուամենայնիվ, 2008 թվականին համապատասխան գերատեսչությունների ներկայացուցիչների համար նախատեսվում է էկոպիտակավորման վերաբերյալ տեղեկատվական դասընթացների անցկացում:

[64] 2001թ. հունիսի 15-ի Հայպետստանդարտի հրաման N 22-Վ՝ «Ներքին այրման շարժիչների վառելիքների անվտանգության ցուցանիշները, փորձարկման մեթոդները և դրանց պահման, փոխադրման, իրացման ու օգտագործման փուլերում անվտանգության ապահովման և շրջակա միջավայրի պահպանման պահանջները հաստատելու մասին»:
[65] 1994 թ. դեկտեմբերի 20-ի Խորհրդի դիրեկտիվ N 94/63՝ «Բենզինի պահման և տերմինալներից լցակայաններ տեղափոխման ընթացքում առաջացած ցնդող օրգանական միացությունների արտանետումների վերահսկողության վերաբերյալ»:
[66] 2000 թ. մայիսի 22-ի Խորհրդի կանոնակարգ N 2000/25՝ «Գյուղատնտեսական և անտառային տնտեսության մեջ օգտագործվող տրակտորների շարժիչներից գազավորված և կախված արտանետումները կանխող գործողությունների վերաբերյալ»:
[67] 1997 թ. դեկտեմբերի 16-ի N 97/68 Խորհրդի դիրեկտիվ՝ «Մոբիլ սարքերի ներքին այրման շարժիչներից արտանետվող գազավորված և կախված արտանետումների չափումների վերաբերյալ»:
[68] 1999 թ. մարտի 13-ի Խորհրդի դիրեկտիվ N 1999/13՝ «Որոշակի գործողութունների ընթացքում և սարքերի մեջ օգտագործվող օրգանական լուծույթներից առաջացած ցնդող օրգանական միացությունների արտանետումների սահմանափակումների վերաբերյալ»:
[69] 1999 թ. դեկտեմբերի 13-ի Խորհրդի կանոնակարգ N 82/884՝ «Նոր ուղևորատար մեքենաների մարքեթինգի համար վառելիքի տնտեսման և $CO_2$ արտանետումների վերաբերյալ սպառողներին տեղեկատվության հասանելիության մասին»:

## 4.2.1 Օրենսդրական համապատասխանեցում

| 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|---|
| NN ը/կ | Միջոցառում | ԵՄ իրավական աղբյուր | Պատասխանատու մարմին | Ներկայացման ժամկետ | Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր) | Տեխնիկական աջակցություն |
| | | *2007* | | | | |
| 1. | «Ներքին այրման շարժիչների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» No 1592-Ն 2004թ. 11-ը նոյեմբերի ՀՀ կառավարության որոշման հիման վրա համանուն ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | • «Բենզինի և դիզելայի վառելիքի որակի վերաբերյալ» 1998թ. հոկտեմբերի 13-ի No 98/70 Խորհրդի կանոնակարգ<br>• «Դիզելային վառելիքում ծծմբի պարունակության վերաբերյալ»1993 թ. մարտի 22-ի No 93/12 Խորհրդի կանոնակարգ | ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն (ՀՀ բնապահպանության նախարարություն/) | 1-ին եռամսյակ | 29 | միջազգային փորձագետի խորհրդատվություն |
| 2. | «Ներքին այրման շարժիչների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» No 1592-Ն 2004թ. 11-ը նոյեմբերի ՀՀ կառավարության որոշուման հիման վրա համանուն ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | «Դիզելային վառելիքով աշխատող ավտոմեքենաներից գոյացող արտանետումների դեմ ուղղված մթնոլորտային օդի աղտոտվածության չափումների վերաբերյալ» 1987 թ. դեկտեմբերի 3-ի No 88/77 Խորհրդի կանոնակարգ, | ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն (ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն) | 2-րդ եռամսյակ | 28 | միջազգային փորձագետի խորհրդատվություն |
| 3. | «Ներքին այրման շարժիչների վառելիքների անվտանգության ցուցանիշները, փորձարկման մեթոդները և դրանց պահման, փոխադրման, իրացման ու օգտագործման փուլերում անվտանգության ապահովման և շրջակա միջավայրի պահպանման պահանջները հաստատելու մասին» No 22-Վ 2001թ. 15-ը հունիսի Հայպետստանդարտի հրամանի հիման վրա ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | « Բենզինի պահման և տերմինալներից լցակայաններ տեղափոխման ընթացքում առաջացած ցնդող օրգանական միացությունների արտանետումների վերահսկողության վերաբերյալ» 1994 թ. դեկտեմբերի 20-ի No 94/63 Խորհրդի դիրեկտիվ | ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն (ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն) | 3-րդ եռամսյակ | 25 | միջազգային փորձագետի խորհրդատվություն |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 82 | |
| 2008 | | | | | | |
| 4. | «Ներքին այրման շարժիչներից արտանետումների չափումների և դրանց դեմ կանխող գործողությունների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի» հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | • «Գյուղատնտեսական և անտառային տնտեսության մեջ օգտագործվող տրակտորների շարժիչներից գազավորված և կախված արտանետումները կանխող գործողությունների վերաբերյալ » 2000 թ. մայիսի 22-ի No 2000/25 Խորհրդի կանոնակարգ<br>• «Մոբիլ սարքերի ներքին այրման շարժիչներից արտանետվող գազավորված և կախված արտանետումների չափումների վերաբերյալ» 1997 թ. դեկտեմբերի 16-ի No 97/68 Խորհրդի դիրեկտիվ, | ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն (ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ տրանսպորտի նախարարություն) | 1-ին եռամսյակ | 81 | միջազգային փորձագետի խորհրդատվություն |
| 5. | «Ցնդող օրգանական միացությունների արտանետումների սահմանափակումների հաստատման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | «Որոշակի գործողութունների ընթացքում և սարքերի մեջ օգտագործվող օրգանական լուծույթներից առաջացած ցնդող օրգանական միացությունների արտանետումների սահմանափակումների վերաբերյալ» 1999 թ. մարտի 13-ի No 1999/13 Խորհրդի դիրեկտիվ | ՀՀ բնապահպանության նախարարություն (ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն ՀՀ տրանսպորտի նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն) | 2-րդ եռամսյակ | 51 | միջազգային փորձագետի խորհրդատվություն |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 132 | |
| | | | | | 214 | |

### 4.2.2 Ինստիտուցիոնալ կարողություններ[70]

| 0 | 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|
| NN ը/կ | Հաստատություն | Վերակազմակերպում | Վերապատրաստման կարիքներ | Տեխնիկական աջակցության կարիքներ |
| 1. | ՀՀ առողջապահության նախարարություն<br>ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն | | Ներքին այրման շարժիչներից առաջացած արտանետումների որոշման մեթոդաբանության վերաբերյալ դասընթացներ<br>6 օր 2008թ | միջազգային խորհրդատվություն |
| 2. | ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն | | Բենզինի և դիզելային վառելիքի որակի, պահման, տեղափոխման պայմանների վերաբերյալ դասընթացներ 5 օր 2007 | միջազգային խորհրդատվություն |
| 3, | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն<br>ՀՀ առողջապահության նախարարություն | | Էկոպիտակավորման վերաբերյալ դասընթացներ 5 օր 2008 թ. | միջազգային խորհրդատվություն |

[70] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ

## 5. Կլիմայի փոփոխություն

### Ներածություն

ՀՀ օրենսդրության մեջ առկա չէ որևէ իրավական ակտ, որը կարգավորում է օզոնի շերտի քայքայման նյութերի արտադրությունը, քանի որ Հայաստանում նման արտադրությունը բացակայում է: Ազգային օրենսդրությամբ չի կարգավորվում նաև ջերմոցային գազերի արտանետումից ազատ տարածքի վաճառքը և նման հարցեր: Սակայն հարկ է նշել, որ Հայաստանը 1993 թվականի մարտի 29-ին վավերացրել է ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիան[71]: Ինչպես նաև վավերացրել է այդ կոնվենցիային կից Կիոտոյի արձանագրությունը[72]: Արձանագրությունը ուժի մեջ է մտել 2005 թվականի փետրվարի 16-ին: Հայաստանի կողմից ստորագրվել են նաև «Օզոնային շերտի պահպանության մասին» կոնվենցիան[73] և «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» արձանագրությունը[74]: Հարկ է նշել, որ Մոնրեալի արձանագրության համաձայն՝ Հայաստանն ունի ժամանակացույց՝ օզոնային շերտը քայքայող նյութերի փոխարինման ուղղությամբ (մինչև 2008 թ.):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանը չի ներառված Կիոտոյի արձանագրության հավելվածում թվարկված երկրների ցանկում, հարկավոր է կատարել ուսումնասիրություն՝ ջերմոցային գազերի արտանետումների սահմանափակման հնարավորությունների վերաբերյալ:

### Ինստիտուցիոնալ կարողություններ

Համապատասխան գերատեսչությունների մասնագետների համար կկազմակերպվեն վերապատրաստման դասընթացներ՝ ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին» կոնվենցիայի և Կիոտոյի արձանագրության դրույթների կիրարկման վերաբերյալ:

---

[71] 115, 25.02. 1998 թ. ՀՀ կառավարության որոշում:
[72] Ն-323-2, 26.12.2002թ. ՀՀ կառավարության որոշում:
[73] 567, 12.09.2002թ. ՀՀ կառավարության որոշում:
[74] 567, 12.09.2002թ. ՀՀ կառավարության որոշում:

*5.1 Ինստիտուցիոնալ կարողություններ*[75]

| 0 | 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|
| NN ը/կ | Հաստատություն | Վերակազմակերպում | Վերապատրաստման կարիքներ | Տեխնիկական աջակցության կարիքներ |
| 1. | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ առողջապահության նախարարություն | - | ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին» կոնվենցիա և Կիոտոյի առձանագրության դրույթների կիրառկման վերաբերյալ դասընթացներ<br>5 օր 2006 թ. | միջազգային խորհրդատվություն |

[75] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ

## 6. Ջրերի պահպանություն և կառավարում

### Ներածություն

Հայաստանի Հանրապետության ջրային օրենսդրությունը հիմնականում համապատասխանում է Եվրամիության օրենսդրության պահանջներին, որը պայմանավորված է նրանով, որ 2002 թվականին ընդունված Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրքը նախորդի համեմատ ամբողջական ու համալիր իրավական կարգավորման է ենթարկում ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի օգտագործման և պահպանության ոլորտում առաջացող հարաբերությունները:

Ջրերի պահպանության բնագավառում ԵՄ օրենսդրության մեջ առկա են իրավական ակտեր, որոնք կարգավորում են ջրային ռեսուրսների աղտոտումը գյուղատնտեսության մեջ օգտագործվող առանձին պարարտանյութերով, քիմիական ձեռնարկություններում օգտագործվող տարբեր նյութերով, ինչպես նաև առանձին կարգավորվում են ստորգետնյա ջրերի աղտոտման և պահպանության հարցերը: ՀՀ օրենսդրությունում առկա են մեխանիզմներ, որոնք կարգավորում են խմելու և մշակութային-կենցաղային նպատակներով օգտագործվող ջրերի որակը և ստանդարտները: Գյուղատնտեսության մեջ օգտագործվող պարարտանյութերի անվտանգության պահանջները սահմանվում են առանձին իրավական ակտով, սակայն ջրերի աղտոտման և պահպանության հետ այդ ակտը չի առնչվում: Ջրերի օգտագործման և որոշակի նյութերով աղտոտման դեպքում վճարների դրույքաչափերի հարցերը ՀՀ օրենսդրության մեջ կարգավորվում են «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին»[76] և «Բնապահպանական և բնօգտագործման վճարների դրույքաչափերի մասին»[77] ՀՀ օրենքներով:

Ջրային ռեսուրսների որակի բնագավառում Եվրամիության օրենսդրությունը կարգավորում է մարդկանց կողմից սպառվող ջրի որակը, խմելու ջրի ջրառման նպատակով օգտագործվող մակերևութային ջրերի որակը, լողալու, ձկների, խեցեմորթների համար նախատեսված ջրային ռեսուրսների որակը, ինչպես նաև ջրային ռեսուրսների որակի պահանջների պահպանման նկատմամբ մոնիտորինգի իրականացման կարգը և խախտման դեպքում կանխարգելիչ կամ պաշտպանիչ գործողությունների ձեռնարկումը:

Հայաստանի Հանրապետությունում ջրերի ստանդարտներին ներկայացվող պահանջները կարգավորվում են ՀՀ ջրային օրենսգրքով և ՀՀ առողջապահության նախարարության կողմից խմելու ջրի, սննդամթերքում օգտագործվող ջրերի որակների վերաբերյալ ընդունված հրամաններով:

Ջրային ռեսուրսների որակի նկատմամբ պահանջներ սահմանող օրենսդրական բացը հատկապես նկատելի է ձկնատնտեսական նշանակության, կակղամորթների (խեցեմորթների) համար նախատեսված ջրերի համար: Հայաստանի Հանրապետությունում այս ջրերի որակի նկատմամբ պահանջների համար դեռևս կիրառվում են ԽՍՀՄ–ում ընդունված ՍԹԿ-ները, պահանջները, նորմերը:

Ջրային ռեսուրսների որակի նկատմամբ պահանջներ սահմանող օրենսդրական բացը նաև արտահայտվում է մարդկանց սպառման համար նախատեսված ջրերի որակի ստուգման մեթոդոլոգիաների հստակ սահմանման և մոնիտորինգային մեխանիզմների ամրագրման մեջ:

### 2006 թվական

ԵՄ օրենսդրության պահանջների համաձայն՝ ջրային միջավայրում և ստորգետնյա ջրերում որոշակի վտանգավոր նյութերի արտահոսքերը վերահսկելու, սպառման համար նախատեսված ջրերի որակի չափորոշիչներ սահմանելու,[78] նպատակով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն ՀՀ առողջապահության նախարարի մի շարք հրամաններում, ինչպես նաև կմշակի ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ վտանգավոր նյութերով ստորերկրյա ջրերի աղտոտման չափաքանակները հաստատելու մասին:

Խմելու համար նախատեսված մակերևութային ջրերի որակը, նմուշառման հաճախականության և չափման մեթոդները[79] ԵՄ օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու նպատակով ՀՀ առողջապահության նախարարությունը ՀՀ բնապահպանության նախարարության մասնակցությամբ կմշակի «Մակերևութային այն ջրերի որակի

---

[76] ՀՕ-270, 28.12. 1998թ.:

[77] ՀՕ-49, 29.04. 2000թ.:

[78] 2000թ. հոկտեմբերի 23-ի ԵՀ և ԵԽ դիրեկտիվ թիվ 2000/60/EC՝ «Համայնքի շրջանակային ջրային քաղաքականությունը հաստատելու մասին», 1976թ. մայիսի 4-ի Խորհրդի դիրեկտիվ N 76/464՝ «Համայնքի ջրային միջավայրի աղտոտում որոշակի վտանգավոր նյութերի արտահոսքերով», 1979թ. դեկտեմբերի 17-ի Խորհրդի դիրեկտիվ N 80/68՝ «Ստորգետնյա ջրերի պահպանումը որոշակի վտանգավոր նյութերով աղտոտումից», 1991թ. դեկտեմբերի 12-ի Խորհրդի դիրեկտիվ N 91/676՝ «Գյուղատնտեսական աղբյուրներից առաջացած նիտրատներով ջրերը աղտոտումից պահպանելու մասին», 1998 թ. նոյեմբերի 3-ի ԵՀ դիրեկտիվ թիվ 98/83/EC՝ «Մարդկանց կողմից սպառման համար նախատեսված ջրի որակի մասին», 1991 թ. մայիսի 21-ի ԵՀ-ի դիրեկտիվ թիվ 91/271՝ «Համայնքի կեղտաջրերի հեռացման մասին»:

[79] 1975թ. հունիսի 16-ի ԵՀ դիրեկտիվ թիվ 75/440/EEC՝ «Մակերևութային այն ջրերի որակի մասին, որոնք ախատեսված են խմելու ջուր ջրառելու համար», 1979թ. հոկտեմբերի 8-ի ԵՀ դիրեկտիվ թիվ 79/869/EEC՝ «Խմելու ջրի ջրառման նպատակներով օգտագործվող մակերևութային ջրերի նմուշառման և անալիզի հաճախականության և չափման մեթոդների մասին»:

մասին, որոնք նախատեսված են խմելու ջուր ջրառելու համար» և «Խմելու ջրի ջրառման նպատակներով օգտագործվող մակերևութային ջրերի նմուշառման և անալիզի հաճախականության և չափման մեթոդների մասին» իրավական ակտերի նախագծեր, որոնք կհաստատվեն ՀՀ առողջապահության նախարարի հրամանով:

Լողալու համար նախատեսված ջրերի որակը[80] վերահսկելու նպատակով ՀՀ առողջապահության նախարարությունը ՀՀ բնապահպանության նախարարության մասնակցությամբ կմշակի «Լողալու նպատակով օգտագործվող ջրի որակի մասին» իրավական ակտի նախագիծ, որը կհաստատվի ՀՀ առողջապահության նախարարի հրամանով:

**2007 թվական**

ԵՄ օրենսդրության պահանջների համաձայն ջրային քաղաքականությունը հաստատելու, ինչպես նաև կեղտաջրերը հեռացումը կարգավորելու նպատակով ազգային օրենսդրությունում փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Հայաստանի Հանրապետության ավազանային կառավարման տարածքները սահմանելու և դրանց կառավարման պլանների մասին» և «Ջրահեռացման համակարգերի օգտագործման և հեռացվող ջրերի մաքրման կանոնները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումներում:

**2008 թվական**

Քիմիական ձեռնարկությունների աշխատանքի ընթացքում առաջացած սնդիկի վտանգավոր արտանետումների թույլատրելի չափաքանակների սահմանումները[81] նախատեսված չեն ՀՀ օրենսդրությամբ: Ձեռնարկությունների գործունեությունը վերահսկելու նպատակով կմշակվի քլոր և ալկալիններ օգտագործող արտադրությունից առաջացած վտանգավոր նյութերի արտանետումների չափաքանակների սահմանման մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

2008 թվականի առաջին կիսամյակում «Ջրերի պահպանություն» ենթագլխի շրջանակներում ձկնաբուծության համար նախատեսված ջրերի որակի պահպանումն և բարելավումն ապահովելու նպատակով[82] Հայաստանի Հանրապետությունում կմշակվեն կակղամորթների աճեցման նպատակով օգտագործվող ջրերի որակի մասին և ձկնաբուծության նպատակով օգտագործվող ջրերի որակի պահանջների մասին ՀՀ առողջապահության և բնապահպանության նախարարների համատեղ հրամանների նախագծերը:

**2009 թվական**

2009 թվականի առաջին կիսամյակում «Ջրերի պահպանություն» ենթագլխի շրջանակներում ձկնաբուծության համար նախատեսված ջրերի որակի պահպանումն և բարելավումն ապահովելու նպատակով[83] Հայաստանի Հանրապետությունում կմշակվեն ձկնաբուծության նպատակով օգտագործվող ջրերի որակի պահանջների մասին ՀՀ առողջապահության և բնապահպանության նախարարների համատեղ հրամանների նախագծերը:

**Ինստիտուցիոնալ կարողություններ**

Ջրերի պահպանության և կառավարման բնագավառի օրենսդրության համապատասխանեցումն արդյունավետ իրականացնելու նպատակով համապատասխան հաստատությունների մասնագետների համար կկազմակերպվեն վերապատրաստման համատեղ դասընթացներ.

ՀՀ բնապահպանության և ՀՀ առողջապահության նախարարությունների մասնագետների համար կկազմակերպվեն հետևյալ թեմաներով դասընթացներ՝ «Կակղամորթների աճեցման նպատակով օգտագործվող ջրերի որակի վերաբերյալ», «Լողալու նպատակով օգտագործվող ջրի որակի մասին» և «Ձկնաբուծության նպատակով օգտագործվող ջրերի որակի վերաբերյալ»:

ՀՀ առողջապահության, ՀՀ բնապահպանության, ՀՀ ֆինանսների, ՀՀ տարածքային կառավարման նախարարությունների, Ջրային տնտեսության պետական կոմիտեի, Հանրային

---

[80] 1975թ. դեկտեմբերի 8-ի ԵՀ դիրեկտիվ թիվ 76/160/EEC՝ «Լողալու ջրի որակի մասին»:

[81] 1982թ. մարտի 22-ի Խորհրդի դիրեկտիվ N 82/176 «Սնդիկի արտահոսքի սահմանային պարունակությունը և իրական րակը քլոր-ալկալինային էլեկտրոլիզային արտադրությունից»:

[82] 1979թ. հոկտեմբերի 30-ի ԵՀ դիրեկտիվ թիվ 79/923/EEC՝ «Խեցեմորթների, ջրերի որակի մասին»:
1978. հուլիսի 18-ի ԵՀ դիրեկտիվ թիվ 78/659/EEC՝ «Ձկնաբուծությունում օգտագործվող ջրերի որակի պահպանման և բարելավման մասին»:

[83] 1979թ. հոկտեմբերի 30-ի ԵՀ դիրեկտիվ թիվ 79/923/EEC՝ «Խեցեմորթների, ջրերի որակի մասինլ»:
1978. հուլիսի 18-ի ԵՀ դիրեկտիվ թիվ 78/659/EEC՝ «Ձկնաբուծությունում օգտագործվող ջրերի որակի պահպանման և բարելավման մասին»:

ծառայությունների կարգավորման հանձնաժողովի մասնագետների համար համատեղ կկազմակերպվեն հետևյալ դասընթացները՝ «Ջրում աղտոտող նյութերի և արտահոսքերի նորմավորման վերաբերյալ», «Ջրի որակի հսկողության և վերահսկողության վերաբերյալ», «Ջրում աղտոտող նյութերի որոշման, հետազոտությունների կազմակերպման, հետազոտությունների որակի հսկողության համակարգերի վերաբերյալ», «Խմելու ջրի ջրառման նպատակով օգտագործվող մակերևութային ջրերի որակի մասին», «Խմելու ջրի ջրառման նպատակով օգտագործվող մակերևութային ջրերի նմուշառման, անալիզի և չափման մեթոդաբանության վերաբերյալ», «Մարդկանց կողմից սպառվող ջրի որակի վերաբերյալ», «Գետավազանային կառավարման պլաններ նախագծելու վերաբերյալ»:

Նշված գերատեսչությունների մասնագետների համար կկազմակերպվեն տեղեկատվական դասընթացներ «Միջազգային լճերի և անդրսահմանային ջրհոսքերի պահպանության և օգտագործման մասին» (Հելսինկիի կոնվենցիայի) դրույթների կիրարկման վերաբերյալ:

ՀՀ առողջապահության, ՀՀ տարածքային կառավարման նախարարությունների, Ջրային տնտեսության պետական կոմիտեի, Հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողովի մասնագետների համար կկազմակերպվեն «Համայնքային կեղտաջրերի հեռացման մասին» և «Համայնքային ջրամատակարարման մասին» դասընթացներ:

*6.1 Օրենսդրական համապատասխանեցում*

| 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|---|
| NN ը/կ | Միջոցառում | ԵՄ իրավական աղբյուր | Պատասխանատու մարմին | Ներկայացման ժամկետ | Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր) | ԵՄ տեխնիկական աջակցություն |
| *2006* | | | | | | |
| 1. | «Վտանգավոր նյութերով ստորերկրյա ջրերի աղտոտման չափաքանակները սահմանելու մասին » ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | 2000 թվականի հոկտեմբերի 23-ի ԵՀ-ի և ԵՊ-ի դիրեկտիվ թիվ 2000/60/EC «Համայնքի շրջանակային ջրային քաղաքականությունը հաստատելու մասին» | ՀՀ բնապահպանության նախարարություն (ՀՀ առողջապահության նախարարություն) | 4-րդ եռամսյակ | 50 | խորհրդատվություն |
| 2. | «Մակերևութային այն ջրերի որակի մասին, որոնք նախատեսված են խմելու ջուր ջրառելու համար» ՀՀ առողջապահության և բնապահպանության նախարարների համատեղ հրամանի նախագծի մշակում | 1975 թվականի հունիսի 16-ի ԵՀ դիրեկտիվ թիվ 75/440/EEC «Մակերևութային այն ջրերի որակի մասին, որոնք նախատեսված են խմելու ջուր ջրառելու համար» | ՀՀ առողջապահության նախարարություն, (ՀՀ բնապահպանության նախարարություն) | 4-րդ եռամսյակ | 15 | խորհրդատվություն, փորձաքննություն, վերապատրաստում |
| 3. | «Խմելու ջրի ջրառման նպատակներով օգտագործվող մակերևութային ջրերի նմուշառման և անալիզի հաճախականության և չափման մեթոդների մասին» ՀՀ առողջապահության և բնապահպանության նախարարների համատեղ հրամանի նախագծի մշակում | 1979 թվականի հոկտեմբերի 8-ի ԵՀ դիրեկտիվ թիվ 79/869/EEC «Խմելու ջրի ջրառման նպատակներով օգտագործվող մակերևութային ջրերի նմուշառման և անալիզի հաճախականության և չափման մեթոդների մասին» | ՀՀ առողջապահության նախարարություն, (ՀՀ բնապահպանության նախարարություն) | 4-րդ եռամսյակ | 18 | խորհրդատվություն, փորձաքննություն, վերապատրաստում |
| 4. | «Լողալու նպատակով օգտագործվող ջրի որակի մասին» ՀՀ առողջապահության և բնապահպանության նախարարների համատեղ հրամանի նախագծի մշակում | 1975 թվականի դեկտեմբերի 8-ի ԵՀ թիվ 76/160//E/EC դիրեկտիվ «Լողալու ջրի որակի մասին» | ՀՀ առողջապահության նախարարություն, (ՀՀ բնապահպանության նախարարություն) | 4-րդ եռամսյակ | 21 | խորհրդատվություն, փորձաքննություն, վերապատրաստում |
| 5. | • Խմելու ջուր: ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգենիկ պահանջներ: որակի հսկողություն N 2- III-Ա 2-1 սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու մասին No 876 2002 թ. 25-ը դեկտեմբերի առողջապահության նախարարի հրամանում | • 1979թ. դեկտեմբերի 17-ի «Ստորգետնյա ջրերի պահպանումը որոշակի վտանգավոր նյութերով աղտոտումից» Խորհրդի դիրեկտիվ<br>• 1998 թվականի նոյեմբերի 3-ի ԵՀ-ի դիրեկտիվ թիվ 98/83/EC «Մարդկանց | ՀՀ առողջապահության նախարարություն (ՀՀ բնապահպանության նախարարություն) | 4-րդ եռամսյակ | 48 | խորհրդատվություն |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ առողջապահության նախարարության հրամանի նախագծի մշակում<br><br>• «Խմելու-տնտեսական նշանակության ջրմուղների և ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման գոտիների» սանիտարական կանոնների և նորմերի N 2-III - Ա2-2 ՀՀ առողջապահության նախարարի 29.11.2002 թ. թիվ 803 հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ առողջապահության նախարարության հրամանի նախագծի մշակում<br><br>• ՀՀ առողջապահության նախարարության 28.03.2005 թվականի «Պարենային հումքի և սննդամթերքի անվտանգությանը և սննդային արժեքին ներկայացվող հիգիենիկ պահանջներ. Որակի հսկողություն`N 2-III-A 2-1Սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու մասին» թիվ 181 հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ առողջապահության նախարարության հրամանի նախագծի մշակում<br>• ՀՀ առողջապահության նախարարության 08.08.2003 թվականի «Ոչ ալկոհոլային ըմպելիքների արտադրությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2-III-4, 1-02-2003 սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմերը հաստատելու մասին» թիվ 682-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ առողջապահության նախարարության հրամանի նախագծի մշակում | կողմից սպառման համար նախատեսված ջրի որակի մասին» | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 152 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| *2007* | | | | | | |
| 6. | ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության ավազանային կառավարման տարածքները սահմանելու և դրանց կառավարման պլանների մասին թիվ 1749-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | 2000 թվականի հոկտեմբերի 23-ի ԵՀ-ի և ԵՊ-ի դիրեկտիվ թիվ 2000/60/EC «Համայնքի շրջանակային ջրային քաղաքականությունը հաստատելու մասին» | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2-րդ եռամսյակ | 15 | խորհրդատվություն, վերապատրաստում, փորձաքննություն |
| 7. | ՀՀ կառավարության 28.08.2003 թվականի «Ջրահեռացման համակարգերի օգտագործման և հեռացվող ջրերի մաքրման կանոնները հաստատելու մասին» թիվ 1228-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | 1991 թվականի մայիսի 21-ի ԵՀ-ի թիվ 91/271 դիրեկտիվ «Համայնքի կեղտաջրերի հեռացման մասին» | ՀՀ բնապահպանության նախարարություն, (ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտե ՀՀ առողջապահության նախարարություն) | 2-րդ եռամսյակ | 19 | խորհրդատվություն, փորձաքննություն, վերապատրաստում |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 34 | |
| *2008* | | | | | | |
| 8. | «Քլոր և ալկալիններ օգտագործող արտադրությունից առաջացած վտանգավոր նյութերի արտանետումների չափաքանակների սահմանման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | «Սնդիկի արտահոսքի սահմանային պարունակությունը և իրական որակը քլոր - ալկալինային էլեկտրոլիզային արտադրությունից» 1982թ. մարտի 22-ի No 82/176 Խորհրդի դիրեկտիվ | ՀՀ բնապահպանության նախարարություն (ՀՀ առողջապահության նախարարություն) | 1-ին եռամսյակ | 15 | խորհրդատվություն |
| 9. | «Կակղամորթերի աճեցման նպատակով օգտագործվող ջրերի որակի վերաբերյալ» ՀՀ առողջապահության և բնապահպանության նախարարների համատեղ հրամանի նախագծի մշակում | 1979 թվականի հոկտեմբերի 30-ի ԵՀ թիվ 79/923/EEC դիրեկտիվ «Խեցեմորթների ջրերի որակի վերաբերյալ» | ՀՀ բնապահպանության նախարարություն, (ՀՀ առողջապահության նախարարություն) | 4-րդ եռամսյակ | 15 | խորհրդատվություն, փորձաքննություն, վերապատրաստում |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 30 | |
| 2009 | | | | | | |
| 10. | «Ձկնաբուծության նպատակով օգտագործվող ջրերի որակի պահանջների մասին» ՀՀ առողջապահության և բնապահպանության նախարարների | 1978 թվականի հուլիսի 18-ի ԵՀ-ի թիվ 78/659/EEC դիրեկտիվ « Ձկնաբուծությունում օգտագործվող ջրերի որակի պահպանման և բարելավման | ՀՀ բնապահպանության նախարարություն, (ՀՀ առողջապահության նախարարություն) | 1-ին եռամսյակ | 21 | խորհրդատվություն, փորձաքննություն, վերապատրաստում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | համատեղ հրամանի նախագծի մշակում | մասին » | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 21 | |
| | | | | | 237 | |

*6.2 Ինստիտուցիոնալ կարողություններ*[84]

| 0 | 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|
| NN ը/կ | Հաստատություն | Վերակազմակերպում | Վերապատրաստման կարիքներ | Տեխնիկական աջակցության կարիքներ |
| 1. | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ առողջապահության նախարարություն<br>ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտե<br>ՀՀ հանրային ծառայութունների կարգավորման հանձնաժողով | | • Ջրում աղտոտող նյութերի և արտահոսքերի նորմավորման վերաբերյալ դասընթացներ (2 օր 2006 թ.)<br>• Ջրի որակի հսկողության և վերահսկողության վերաբերյալ դասընթացներ (2 օր 2006 թ.)<br>• Ջրում աղտոտող նյութերի որոշման , հետազոտությունների կազմակերպման, հետազոտությունների որակի հսկողության համակարգերի վերաբերյալ դասընթացներ (2 օր 2006 թ.)<br>• Խմելու ջրի ջրառման նպատակով օգտագործվող մակերևութային ջրերի որակի մասին դասընթացներ (7 օր 2007թ.)<br>• Խմելու ջրի ջրառման նպատակով օգտագործվող մակերևութային ջրերի նմուշառման, անալիզի և չափման մեթոդաբանության վերաբերյալ դասընթացներ (7օր 2007թ.)<br>• Մարդկանց կողմից սպառվող ջրի որակի վերաբերյալ դասընթացներ, ջրի ստանդարտներ մշակող կազմակերպություններ ուսումնական այցելություններ (10 օր 2006թ.)<br>• Գետավազանային կառավարման պլաններ նախագծելու վերաբերյալ դասընթացներ (5 օր 2006թ.)<br>• Միջազգային լճերի և անդրսահմանային ջրհոսքերի պահպանության և օգտագործման մասին /Հելսինկի կոնվենցիայի/ դրույթների կիրարկման վերաբերյալ դասընթացների 2006 թ. 5 օր | խորհրդատվություն, փորձաքննություն |
| 2. | ՀՀ առողջապահության նախարարություն<br>ՀՀ բնապահպանության նախարարություն | | • Կակղամորթների աճեցման նպատակով օգտագործվող ջրերի որակի մասին | խորհրդատվություն, փորձաքննություն |

[84] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | դասընթացներ (10 օր 2008թ.)<br>• Զկնաբուծության նպատակով օգտագործվող ջրերի որակի մասին դասընթացներ (10 օր 2009թ.)<br>• Լողալու նպատակով օգտագործվող ջրի որակի վերաբերյալ դասընթացներ (10օր 2006թ.) | |
| 4. | ՀՀ առողջապահության նախարարություն<br>ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտե<br>ՀՀ հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողով | | • Համայնքային կեղտաջրերի հեռացման մասին դասընթացներ 5-10 օր 2007թ.)<br>• Համայնքային ջրամատակարարման վերաբերյալ դասընթացներ 5-10օր 2007 | խորհրդատվություն, փորձաքննություն |

## 7. Բնության և կենսաբազմազանության պահպանություն

### Ներածություն

Բնության և կենսաբազմազանության պահպանության բնագավառում ՀՀ օրենսդրությունը հիմնականում չի համապատասխանում ԵՄ օրենսդրության պահանջներին: Մասնավորապես, կենսաբազմազանության պահպանության ոլորտում ՀՀ օրենսդրությունում չեն կարգավորվում գենետիկական ռեսուրսների պահպանությունն և հավաքը, վայրի բուսական և կենդանական աշխարհի տեսակների առևտուրը, անազատ պայմաններում ապրող կենդանիների պաշտպանությունը և այլն:

Հայաստանի հատուկ պահպանվող տարածքների ներկայիս համակարգը ենթակա է վերանայման և համալրման՝ հատուկ պահպանվող նոր տարածքներով: Կարևորվում է բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման պլանների ամրագրումը ՀՀ օրենսդրության մեջ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է «Բնության և կենսաբազմազանության պահպանություն» ենթագլուխը մինչև 2009 թվականը համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

### 2006 թվական

Կենսաբազմազանության պահպանության նպատակով բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգի վերաբերյալ 1992թ. «Վայրի բուսական և կենդանական աշխարհի և դրանց բնակատեղիների պահպանության մասին» մայիսի 21-ի թիվ 92/43/EEC դիրեկտիվին ՀՀ օրենսդրությունը համապատասխանեցնելու նպատակով 2006 թվականի չորրորդ եռամսյակում կմշակվի «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որում կներառվեն նաև բնության հատուկ պահպանվող տարածքների համար հաստատված կառավարման պլանների առկայության պահանջ և դրանց կազմման կամ մշակման սկզբունքները:

### 2007 թվական

Անազատ պայմաններում ապրող կենդանիների պաշտպանությանը վերաբերող՝ 1999թ. մարտի 29-ի «Վայրի կենդանիներին կենդանաբանական այգիներում պահելու մասին» թիվ 1999/22/EC դիրեկտիվին ՀՀ օրենսդրությունը համապատասխանեցնելու նպատակով 2007թ. 2-րդ կիսամյակում կմշակվի կենդանիներին կենդանաբանական այգիներում պահելու կարգի վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծ և փոփոխություններ ու լրացումներ կկատարվեն մի շարք իրավական ակտերում[85]:

ԵՄ 1979թ. ապրիլի 2-ի «Վայրի թռչունների պահպանության մասին» թիվ 79/409/EEC դիրեկտիվի հիման վրա փոփոխություններ կկատարվեն «Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանիների սիրողական որսի և ձկնորսության, ձկնորսության և որսի օբյեկտ չհանդիսացող կենդանիների որսի կատարման կանոնները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2004թ. ապրիլի 8-ի թիվ 646-Ն որոշման մեջ, ինչպես նաև «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքում:

### 2008 թվական

Կարևորելով կենսաբազմազանության պահպանության ոլորտում ՀՀ օրենսդրության համապատասխանեցումը ԵՄ օրենսդրության պահանջներին՝ 2008 թվականի 1-ին եռամսյակում համապատասխանեցման համար հիմք կհանդիսանա հետևյալ ԵՄ օրենսդրությունը և 1996թ. դեկտեմբերի 9-ի «Վայրի ֆլորայի և ֆաունայի տեսակների պաշտպանության կարգի մասին՝ դրանց առևտուրը կարգավորելու միջոցով» թիվ 338/97 ՀՀ կառավարության որոշումը, որի հիման վրա փոփոխություններ ու լրացումներ կկատարվեն ՀՀ գործող մի շարք իրավական ակտերում[86] և կմշակվի կենսաբազմազանության մասին օրենքի նախագիծ:

---

[85] Կենդանիներին կենդանաբանական այգիներում պահելու կարգի վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակմամբ անհրաժեշտություն է առաջանում լրացումներ կատարել «Կենդանական աշխարհի մասին», «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքներում և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում:

[86] «Կենդանական աշխարհի մասին», «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքներում, ՀՀ կառավարության 2002թ. հուլիսի 18-ի «Բուսաբանական հավաքածուներ և առանձին նմուշներ ՀՀ տարածքից արտահանելու և ՀՀ տարածք ներմուծելու կարգի մասին» թիվ 1773-Ն և ՀՀ կառավարության 2002թ. հուլիսի 18-ի «Վայրի կենդանիներ և կենդանաբանական հավաքածուներ ու առանձին նմուշներ ՀՀ տարածք արտահանելու և ՀՀ տարածք ներմուծելու կարգի մասին թիվ 1174-Ն որոշումներում, ինչպես նաև ՀՀ մաքսային օրենսգրքում:

**Ինստիտուցիոնալ կարողություններ**

Ընդհանուր դրույթների բնագավառի օրենսդրության համապատասխանեցումն արդյունավետ իրականացնելու նպատակով ՀՀ բնապահպանության նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր Մաքսային պետական կոմիտեի մասնագետների համար կկազմակերպվի վերապատրաստման դասընթաց «Առևտրի կարգավորման միջոցով վայրի բուսական և կենդանական տեսակների պահպանության մասին» թեմայով:

*7.1 Օրենսդրական համապատասխանեցում*

| 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|---|
| NN | Միջոցառում | ԵՄ իրավական աղբյուր | Պատասխանատու մարմին | Ներկայացման ժամկետ | Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր) | ԵՄ տեխնիկական աջակցություն |
| *2006* | | | | | | |
| 1. | • «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | 1992 թվականի մայիսի 21-ի ԵՀ թիվ 92/43/EEC դիրեկտիվ «Վայրի բուսական և կենդանական աշխարհի և դրանց բնակատեղիների պահպանության մասին» | ՀՀ բնապահպանության նախարարություն | 4-րդ եռամսյակ | 19 | Խորհրդատվություն, փորձաքննություն |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 19 | |
| *2007* | | | | | | |
| 2. | • «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի մշակում<br>• «Կենդանիների կենդանաբանական այգիներում պահելու կարգի վերաբերյալ » ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում<br>• «ՀՀ Վարչական օրենսգրքում» լրացումներ կատարելու վերաբերյալ» ՀՀ օրենքի նախագծի մշակում<br>• «Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանիների սիրողական որսի և ձկնորսության, ձկնորսության և որսի օբյեկտ չհանդիսացող կենդանիների որսի կատարման կանոնները հաստատելու մասին ՀՀ կառավարության 08.04.04 թվականի թիվ 646-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | • 1999 թվականի մարտի 29-ի ԵՀ թիվ 1999/22/EC դիրեկտիվ «Վայրի կենդանիներին կենդանաբանական այգիներում պահելու մասին»<br>• 1979 թվականի ապրիլի 2-ի ԵՀ թիվ 79/409/EEC դիրեկտիվ «Վայրի թռչունների պահպանության մասին» | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2-րդ եռամսյակ | 90 | Խորհրդատվություն, փորձաքննություն |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 90 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| *2008* | | | | | | |
| 3. | • «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի մշակում<br>• «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի մշակում<br>• «Առևտրի կարգավորման միջոցով վայրի բուսական և կենդանական տեսակների պահպանության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում<br>• «ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 18-ի «Բուսաբանական հավաքածուներ և առանձին նմուշներ ՀՀ տարածքից արտահանելու և ՀՀ տարածք ներմուծելու կարգի մասին» թիվ 1773-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում<br>• «ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 18-ի «Վայրի կենդանիներ և կենդանաբանական հավաքածուներ ու առանձին նմուշներ ՀՀ տարածք արտահանելու և ՀՀ տարածք ներմուծելու կարգի մասին թիվ 1174-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում<br>• «ՀՀ մաքսային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | 1996 թվականի դեկտեմբերի 9-ի ԵՀ թիվ 338/97 որոշում «Վայրի ֆլորայի և ֆաունայի տեսակների պաշտպանության կարգի մասին`դրանց առևտուրը կարգավորելու միջոցով» | ՀՀ բնապահպանության նախարարություն (ՀՀ կառավարությանն առընթեր Մաքսային պետական կոմիտե,) | 1-ին եռամսյակ | 25 | Խորհրդատվություն, փորձաքննություն, վերապատրաստում |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 25 | |
| | | | | | 134 | |

*7.2 Քաղաքականության համապատասխանեցում*

| 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|---|
| NN | Միջոցառում | ԵՄ իրավական աղբյուր | Պատասխանատու մարմին | Ներկայացման ժամկետ | Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր) | Տեխնիկական աջակցություն |
| *2006* | | | | | | |
| 1. | «Բնության հատուկ պահպանվող յուրաքանչյուր տարածքի համար կառավարման պլանների կազմման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում (2006-2009թթ) | 1992 թվականի մայիսի 21-ի ԵՀ թիվ 92/43/EEC դիրեկտիվ «Վայրի բուսական և կենդանական աշխարհի և դրանց բնակատեղիների պահպանության մասին» | ՀՀ բնապահպանության նախարարություն | 4-րդ եռամսյակ | 19 | Խորհրդատվություն, փորձաքննություն |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 19 | |

## *7.3 Ինստիտուցիոնալ կարողություններ*[87]

| 0 | 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|
| NN | Հաստատություն | Վերակազմակերպում | Վերապատրաստման կարիքներ | Տեխնիկական աջակցության կարիքներ |
| 1. | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտե | - | Առևտրի կարգավորման միջոցով վայրի բուսական և կենդանական տեսակների պահպանության մասին դասընթացներ (10 օր/ 2006թ.) | Խորհրդատվություն, փորձաքննություն |

[87] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ

## 8. Քաղաքացիական պաշտպանություն

### Ներածություն

Քաղաքացիական պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը միայն մասամբ է համապատասխանում Եվրոպական Միության օրենսդրությանը: Անհամապատասխանությունները հիմնականում բացատրվում են այն հանգամանքով, որ ԵՄ օրենսդրությունը, ինչպես նաև անդամ երկրների անհատական գործողությունները հիմնվում են հստակ ձևակերպված և համապատասխան օրենսդրական ակտերում ներկայացված սկզբունքների վրա:

Վերը նշվածը վերաբերում է նաև «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքին[88], որը, հանդիսանալով նշված բնագավառի ՀՀ առավել համապարփակ օրենքը, այնուամենայնիվ, լրիվ չի ընդգրկում նշված սկզբունքները:

Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական պաշտպանության բնագավառում բացակայում է միասնական հիմնադրական իրավական ակտ, որը կընդգրկեր վերը նշված սկզբունքները համատեղ, որոնց վրա կհիմնվեր նշված բնագավառի փոխկապված և ամբողջություն ներկայացնող օրենսդրությունը:

Այսպիսով, մշակման համար նախատեսվելիք «Արտակարգ իրավիճակներից երկրի բնակչության, տարածքի, նյութական և պատմամշակութային արժեքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, որպես նշված բնագավառում միասնական հիմնադրական իրավական ակտ, կոչված կլինի փոխարինելու ներկայումս գործող «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը:

Ինչ վերաբերում է օպերատիվ գործողություններին, ապա Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում բացակայում են ՀՀ տարածքում, ինչպես նաև ՀՀ տարածքից դուրս խոշոր աղետների դեպքում միջազգային համագործակցության արդյունավետության ուժեղացմանը վերաբերող նորմերը և մեխանիզմները:

Վտանգավոր արտադրություններ և նյութեր պարունակող արդյունաբերական օբյեկտներում խոշոր աղետների կանխարգելմանը, ինչպես նաև բնակչության և շրջակա միջավայրի վրա այդ աղետների հետևանքների ազդեցության մեղմացմանը վերաբերող ՀՀ օրենսդրության նորմերը մասամբ համապատասխանում են ԵՄ օրենսդրական փաստաթղթերի համապատասխան դրույթներին[89]: Դրա հետ մեկտեղ ՀՀ օրենսդրությունում բացակայում են մի շարք կարևոր նորմեր[90]: Մասնավորապես, ՀՀ օրենսդրությունում նախատեսված չեն անվտանգության վկայագրում ամրագրված միջոցառումների իրականացմանը ուղղված վերահսկողական գործառույթներ, բացակայում են «վտանգավոր օբյեկտի օպերատորի կողմից անվտանգության վկայագրով սահմանված բոլոր անհրաժեշտ միջոցների ձեռնարկման վերաբերյալ լիազորված մարմնին ցանկացած պահին ապացուցելու մասին», «սիստեմատիկ գնահատման համար տեսչական ստուգումների ծրագրի» և «տեսչական ստուգումների համակարգի» վերաբերյալ կարևոր նորմերը:

ՀՀ օրենսդրությունում բացակայում են նաև քաղաքացիական պաշտպանության և աղետների ռիսկերի նվազեցման հիմնահարցերով գիտա-հետազոտական աշխատանքների կատարելագործմանը, ինչպես նաև նշված հիմնահարցերով բոլոր մակարդակներում՝ տեղական, տարածաշրջանային, հանրապետական ուսումնական ցանցի ստեղծմանը և կատարելագործմանը վերաբերող համապատասխան նորմատիվային ակտերը:

Բացակայում է նաև ՀՀ դժվար հասանելի և մեկուսացված տարածաշրջաններին քաղաքացիական պաշտպանության հատուկ օգնության ցուցաբերմանը վերաբերող նորմատիվային ակտը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է «Քաղաքացիական պաշտպանություն» ենթագլուխը մինչև 2009 թվականը հիմնականում համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

---

[88] ՀՕ-265, 02.12.1998թ.:

[89] 1998թ. նոյեմբերի 11-ի «ՀՀ արդյունաբերական օբյեկտի անվտանգության վկայագրի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում թիվ 702,
1999թ, փետրվարի 2-ի «ՀՀ արդյունաբերական օբյեկտի անվտանգության վկայագրի մշակման կարգը հաստատելու մասին» Արտակարգ իրավիճակների վարչ. հրաման N 40:

[90] 1996թ. դեկտեմբերի 9-ի Եվրամիության խորհրդի դիրեկտիվ թիվ 96/82/EC՝ «Վտանգավոր նյութեր ներգրավող խոշոր վթարների վտանգների վերահսկման մասին»,
2002թ. հուլիսի 17-ի Եվրոպական հանձնաժողովի որոշում թիվ 2002/605/EC՝ «Վտանգավոր նյութեր ներգրավող խոշոր վթարների վտանգի վերահսկման վերաբերյալ Եվրամիության [որհրդի 96/82/EC դիրեկտիվի հետ կապված Հարցարանի մասին»,:
1998թ. հունիսի 26-ի Եվրոպական հանձնաժողովի որոշում թիվ 98/ 433/EC՝ «Վտանգավոր նյութեր ներգրավող խոշոր վթարների վտանգի վերահսկման վերաբերյալ Եվրամիության ;որհրդի 96/82/EC դիրեկտիվի 9-րդ Հոդվածի համաձայն պարտավորություններից ազատելուն ուղղված ներդաշնակեցման չափանիշի սահմանման մասին»::

**2007 թվական**

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը նշված բնագավառում կհամապատասխանեցվի 1999թ. դեկտեմբերի 9-ի Եվրամիության խորհրդի թիվ 1999/847/EC որոշմանը, 2001թ. հոկտեմբերի 23-ի Եվրամիության խորհրդի թիվ 2001/792/EC Euratom որոշմանը[91]:

Մասնավորապես, ներածությունում նշված եվրոպական սկզբունքները ՀՀ օրենսդրության մեջ արտացոլելու նպատակով, որպես տվյալ բնագավառում միասնական հիմնադրական իրավական ակտ, կմշակվի արտակարգ իրավիճակներից երկրի բնակչության, տարածքի, նյութական և պատմամշակութային արժեքների պաշտպանության մասին օրենքի նախագիծը:

Հաշվի առնելով քաղաքացիական պաշտպանության և աղետների վտանգի նվազեցման հիմնահարցերով միջազգային համագործակցության ուժեղացման աճող կարևորությունը և դրա աջակցմանն ուղղված Եվրամիության սահմանած մեխանիզմները և կանոնները ՀՀ օրենսդրության մեջ արտացոլելու անհրաժեշտությունը՝ կմշակվի ՀՀ տարածքում և ՀՀ տարածքից դուրս արտակարգ իրավիճակների դեպքում քաղաքացիական պաշտպանության բնագավառի աջակցության ցուցաբերմանն ուղղված միջազգային համագործակցության ուժեղացման մեխանիզմների և կանոնների սահմանման մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

Դիտարկվող բնագավառում իրավահարաբերությունների հանգամանալից կարգավորման համար, ինչպես նաև վերը նշված նոր մշակվող օրենքների նախագծերում ընդգրկվող եվրոպական սկզբունքները և պահանջները ՀՀ գործող օրենսդրության մեջ արտացոլելու նպատակով կկատարվեն փոփոխություններ և լրացումներ նշված բնագավառին վերաբերող ՀՀ համապատասխան օրենքներում, այլ օրենսդրական փաստաթղթերում և ենթաօրենսդրական ակտերում:

Հաշվի առնելով, որ գիտական հիմքերի ամրապնդումը և հետազոտությունների կատարելագործումը բնական և տեխնածին աղետների վտանգների նվազեցմանն ուղղված կարևորագույն ռազմավարական խնդիրներից են[92] կմշակվի քաղաքացիական պաշտպանության և աղետների ռիսկերի նվազեցման հիմնահարցերով գիտահետազոտական աշխատանքների կատարելագործման մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

**2008 թվական**

Վտանգավոր արտադրություններ և նյութեր պարունակող արդյունաբերական օբյեկտներում խոշոր աղետների կանխարգելմանը, ինչպես նաև բնակչության և շրջակա միջավայրի վրա այդ աղետների հետևանքների ազդեցության մեղմացմանը վերաբերող ՀՀ օրենսդրությունը կհամապատասխանեցվի 1996թ. դեկտեմբերի 9-ի Եվրամիության խորհրդի թիվ 96/82/EC դիրեկտիվին, 2002թ. հուլիսի 17-ի Եվրոպական հանձնաժողովի թիվ 2002/605/EC որոշմանը և 1998թ. հունիսի 26-ի Եվրոպական հանձնաժողովի թիվ 98/433/EC որոշմանը :[93]

Նշված բնագավառում գոյություն ունեցող իրավական կարգավորման բացը լրացնելու համար 2008 թվականին կմշակվի վտանգավոր նյութեր ներգրավող խոշոր վթարների ռիսկերի վերահսկման մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ: Համապատասխանաբար կմշակվի «ՀՀ արդյունաբերական օբյեկտի անվտանգության վկայագրի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 1998թ. նոյեմբերի 11-ի թիվ 702 որոշման մեջ, ինչպես նաև դրա հետ կապված այլ օրենսդրական փաստաթղթերում և ենթաօրենսդրական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

**Ինստիտուցիոնալ կարողություններ**

Ելնելով բնական և տեխնածին աղետների վտանգներից բնակչության լավագույն պաշտպանության ապահովման գործում բոլոր մակարդակներում ուսուցման կարևորությունից և ձեռնամուխ լինելով քաղաքացիական պաշտպանության հիմնահարցերով ուսուցման գործում Եվրոպական հանձնաժողովի և անդամ երկրների հետ համագործակցությանը՝ 2002թ. հունվարի 28-ի

---

91 1999թ. դեկտեմբերի 9-ի Եվրամիության խորհրդի թիվ 1999/847/EC որոշում՝ «Քաղաքացիական պաշտպանության բնագավառում Եվրահամայնքի գործողությունների ծրագրի սահմանման մասին», 2001թ. հոկտեմբերի 23-ի Եվրամիության Խորհրդի թիվ 2001/792/EC, Euratom որոշում՝ «Քաղաքացիական պաշտպանության բնագավառում օգնության ցուցաբերման ուղղությամբ համագործակցության ուժեղացմանը աջակցման մեխանիզմի սահմանման մասին»:

92 2003թ. դեկտեմբերի 22-ի Եվրամիության խորհրդի թիվ 2004/C 8/02 բանաձև՝ «Քաղաքացիական պաշտպանության հիմնահարցերով գիտական հետազոտությունների բնագավառում Եվրահամայնքի համագործակցության ուժեղացման մասին»:

93 1996թ. դեկտեմբերի 9-ի Եվրամիության խորհրդի թիվ 96/82/EC դիրեկտիվ՝ «Վտանգավոր նյութեր ներգրավող խոշոր վթարների վտանգների վերահսկման մասին»,:
2002թ հուլիսի 17-ի Եվրոպական հանձնաժողովի թիվ 2002/605/EC որոշում՝ «Վտանգավոր նյութեր ներգրավող խոշոր վթարների վտանգի վերահսկման վերաբերյալ, Եվրամիության խորհրդի 96/82/EC դիրեկտիվի հետ կապված հարցարանի մասին»,:
1998թ. հունիսի 26-ի Եվրոպական հանձնաժողովի թիվ 98/ 433/EC որոշում՝ «Վտանգավոր նյութեր ներգրավող խոշոր վթարների վտանգի վերահսկման վերաբերյալ Եվրամիության խորհրդի 96/82/EC դիրեկտիվի 9-րդ Հոդվածի համաձայն՝ պարտավորություններից ազատելուն ուղղված ներդաշնակեցման չափանիշի սահմանման մասին»::

Եվրամիության խորհրդի թիվ 2002/C 43/01 բանաձևին[94] համապատասխան՝ 2007թ. կսկսվի քաղաքացիական պաշտպանության և աղետների ռիսկերի նվազեցման հիմնահարցերով բոլոր մակարդակներում՝ տեղական, տարածաշրջանային, հանրապետական ուսումնական ցանցի (դպրոցների և ակտիվ գործող ուսումնական կենտրոնների) ստեղծման և կատարելագործման գործընթացը:

Քաղաքացիական պաշտպանության բնագավառի օրենսդրության համապատասխանեցումն արդյունավետ իրականացնելու, ինչպես նաև ընդունված օրենսդրական փաստաթղթերի կիրարկումն ապահովելու նպատակով ՀՀ տարածքային կառավարման, ՀՀ բնապահպանության, ՀՀ քաղաքաշինության և այլ շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների մասնագետների համար կկազմակերպվեն վերապատրաստման դասընթացներ, մասնավորապես՝ քաղաքացիական պաշտպանության և աղետների ռիսկերի նվազեցման բնագավառում Եվրահամայնքի գործողությունների ծրագրի վերաբերյալ, Եվրամիության տարածքում և տարածքից դուրս արտակարգ իրավիճակների դեպքում քաղաքացիական պաշտպանության բնագավառում օգնության ցուցաբերման ուղղությամբ համագործակցության ուժեղացման մեխանիզմի և սահմանված կանոնների վերաբերյալ, քաղաքացիական պաշտպանության և աղետների ռիսկերի նվազեցման հիմնահարցերով ուսուցման բնագավառում Եվրամիության և անդամ երկրների համագործակցության ուժեղացման վերաբերյալ, վտանգավոր նյութեր ներգրավող խոշոր վթարների ռիսկերի վերահսկմանն ուղղված Եվրահամայնքի օրենսդրության և նրա կիրառման վերաբերյալ, քաղաքացիական պաշտպանության և աղետների ռիսկերի նվազեցման հիմնահարցերով գիտական հետազոտությունների բնագավառում Եվրամիության և անդամ երկրների համագործակցության ուժեղացման վերաբերյալ, քաղաքացիական պաշտպանության բնագավառում կենտրոնական և Արևելյան Եվրոպայի անդամ և թեկնածու երկրների, ինչպես նաև Եվրահամայնքի հետ գործընկերության համաձայնագրեր կնքած երկրների հետ համագործակցության, այդ երկրներում քաղաքացիական պաշտպանության և աղետների ռիսկերի կառավարման մակարդակի բարձրացման վերաբերյալ դասընթացներ:

---

[94] 2002թ. հունվարի 28-ի Եվրամիության խորհրդի թիվ 2002/C 43/01 բանաձև՝ «Քաղաքացիական պաշտպանության հիմնահարցերով ուսուցման բնագավառում համագործակցության ուժեղացման մասին»:

*8.1 Օրենսդրական համապատասխանեցում*

| 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|---|
| NN ը/կ | Միջոցառում | ԵՄ իրավական աղբյուր | Պատասխանատու մարմին | Ներկայացման ժամկետ | Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր) | Տեխնիկական աջակցություն |
| | | | *2007* | | | |
| 1. | «Արտակարգ իրավիճակներից երկրի բնակչության, տարածքի, նյութական և պատմամշակութային արժեքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | «Քաղաքացիական պաշտպանության բնագավառում Եվրահամայնքի գործողությունների ծրագրի սահմանման մասին» 1999թ. դեկտեմբերի 9-ի Եվրամիության Խորհրդի թիվ 1999/847/EC որոշում | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | 2-րդ եռամսյակ | 50 | Խորհրդատվություն, փորձաքննություն |
| 2. | «ՀՀ տարածքում և ՀՀ տարածքից դուրս արտակարգ իրավիճակների դեպքում քաղաքացիական պաշտպանության բնագավառի աջակցության ցուցաբերմանն ուղղված միջազգային համագործակցության ուժեղացման մեխանիզմների սահմանման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | «Քաղաքացիական պաշտպանության բնագավառում օգնության ցուցաբերման ուղղությամբ համագործակցության ուժեղացմանը աջակցման մեխանիզմի սահմանման մասին» 2001թ. հոկտեմբերի 23-ի Եվրամիության Խորհրդի թիվ 2001/792/EC, Euratom որոշում | Հայաստանի փրկարար ծառայություն, (ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայություն, ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտե, ՀՀ քաղաքաշինության նախարարություն) | 2-րդ եռամսյակ | 58 | Խորհրդատվություն, փորձաքննություն |
| 3. | • «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում,<br>• «Փրկարար ուժերի և փրկարարների | • «Քաղաքացիական պաշտպանության բնագավառում Եվրահամայնքի գործողությունների ծրագրի սահմանման մասին» 1999թ. | Հայաստանի փրկարար ծառայություն (ՀՀ առողջապահության նախարարություն ) | 2-րդ եռամսյակ | 26 | Խորհրդատվություն, փորձաքննություն |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում,<br>• «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում,<br>• «Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում,<br>• «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում (1-ին և 2-րդ մասեր) փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում,<br>• «ՀՀ մարզերում պետական կառավարման մասին» ՀՀ նախագահի Հրամանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին հրամանագրի նախագծի մշակում,<br>• ՀՀ կառավարության համապատասխան որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին կառավարության որոշումների նախագծերի մշակում | դեկտեմբերի 9-ի Եվրամիության Խորհրդի թիվ 1999/847/EC որոշում<br><br>• «Քաղաքացիական պաշտպանության բնագավառում օգնության ցուցաբերման ուղղությամբ համագործակցության ուժեղացմանը աջակցման մեխանիզմի սահմանման մասին» 2001թ. հոկտեմբերի 23-ի Եվրամիության Խորհրդի թիվ 2001/792/EC, Euratom որոշում | | | | |
| 4. | «Քաղաքացիական պաշտպանության և աղետների ռիսկերի նվազեցման հիմնահարցերով գիտա-հետազոտական աշխատանքների կատարելագործման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | «Քաղաքացիական պաշտպանության հիմնահարցերով գիտական հետազոտությունների բնագավառում Եվրահամայնքի համագործակցության ուժեղացման մասին» 2003թ. դեկտեմբերի 22 Եվրամիության Խորհրդի թիվ 2004/C 8/02 բանաձև : | Հայաստանի փրկարար ծառայություն (ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն) | 4-րդ եռամսյակ | 56 | Խորհրդատվություն, փորձաքննություն |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 190 | |
| *2008* | | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5. | «Վտանգավոր նյութեր ներգրավող խոշոր վթարների վտանգների վերահսկման մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | • «Վտանգավոր նյութեր ներգրավող խոշոր վթարների վտանգների վերահսկման մասին» 1996թ. դեկտեմբերի 9-ի Եվրամիության Խորհրդի թիվ 96/82/EC դիրեկտիվ<br>• «Վտանգավոր նյութեր ներգրավող խոշոր վթարների վտանգների վերահսկման վերաբերյալ Եվրամիության Խորհրդի 96/82/EC դիրեկտիվի հետ կապված հարցարանի մասին» 2002թ հուլիսի 17-ի Եվրոպական Հանձնաժողովի թիվ 2002/605/EC որոշում<br>• «Վտանգավոր նյութեր ներգրավող խոշոր վթարների վտանգների վերահսկման վերաբերյալ Եվրամիության Խորհրդի 96/82/EC դիրեկտիվի 9-րդ հոդվածի համաձայն պարտավորություններից ազատելուն ուղղված ներդաշնակեցման չափանիշի սահմանման մասին» 1998թ հունիսի 26-ի Եվրոպական Հանձնաժողովի թիվ 98/ 433/EC որոշում | Հայաստանի փրկարար ծառայություն (ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն) | 1-ին եռամսյակ | 98 | Խորհրդատվություն, փորձաքննություն |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 98 | |
| | | | | | 288 | |

## 8.2 Ինստիտուցիոնալ կարողություններ

| 0 | 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|
| NN ը/կ | Հաստատություն | Վերակազմակերպում | Վերապատրաստման կարիքներ | Տեխնիկական աջակցության կարիքներ |
| 1. | Հայաստանի փրկարար ծառայություն<br>ՀՀ բնապահպանության նախարարություն | - | Քաղաքացիական պաշտպանության և աղետների ռիսկերի նվազեցման բնագավառում Եվրահամայնքի գործողությունների ծրագրի վերաբերյալ դասընթաց (7 օր / 2007թ.) | Խորհրդատվություն |
| 2. | Հայաստանի փրկարար ծառայություն<br>ՀՀ բնապահպանության նախարարություն,<br>ՀՀ առողջապահության նախարարություն,<br>ՀՀ քաղաքաշինության նախարարություն,<br>ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտե | - | Եվրոպական Միության տարածքում և տարածքից դուրս արտակարգ իրավիճակների դեպքում քաղաքացիական պաշտպանության բնագավառում օգնության ցուցաբերման ուղղությամբ համագործակցության ուժեղացման մեխանիզմի և սահմանված կանոնների վերաբերյալ դասընթաց (5 օր / 2007թ.) | Խորհրդատվություն |
| 3. | Հայաստանի փրկարար ծառայություն<br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն,<br>Երևանի քաղաքապետարան | Քաղաքացիական պաշտպանության և աղետների ռիսկերի նվազեցման հիմնահարցերով բոլոր մակարդակներում՝ տեղական, տարածաշրջանային, հանրապետական ուսումնական ցանցի (դպրոցների և ակտիվ գործող ուսումնական կենտրոնների) ստեղծում և կատարելագործում (գործընթացի սկիզբ՝ 2007թ, 2-րդ եռամսյակ) | Քաղաքացիական պաշտպանության և աղետների ռիսկերի նվազեցման հիմնահարցերով ուսուցման բնագավառում Եվրամիության և անդամ երկրների համագործակցության ուժեղացման վերաբերյալ դասընթաց<br>(5 օր /2007թ.) | Խորհրդատվություն |
| 4. | Հայաստանի փրկարար ծառայություն<br>ՀՀ բնապահպանության նախարարություն,<br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն,<br>ՀՀ քաղաքաշինության նախարարություն | - | Քաղաքացիական պաշտպանության և աղետների ռիսկերի նվազեցման հիմնահարցերով գիտական հետազոտությունների բնագավառում Եվրամիության և անդամ երկրների համագործակցության ուժեղացման վերաբերյալ դասընթաց<br>(5 օր /2007թ.) | Խորհրդատվություն |
| 5. | Հայաստանի փրկարար ծառայություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն,<br>ՀՀ բնապահպանության նախարարություն, | - | Քաղաքացիական պաշտպանության բնագավառում կենտրոնական և արևելյան Եվրոպայի անդամ և թեկնածու երկրների, ինչպես նաև Եվրահամայնքի հետ | Խորհրդատվություն |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ՀՀ քաղաքաշինության նախարարություն<br>ՀՀ առողջապահության նախարարություն | | գործընկերության համաձայնագրեր կնքած երկրների հետ համագործակցության, այդ երկրներում քաղաքացիական պաշտպանության և աղետների ռիսկերի կառավարման մակարդակի բարձրացման վերաբերյալ դասընթաց (5 օր / 2007թ.) | |
| 6. | Հայաստանի փրկարար ծառայություն<br>ՀՀ բնապահպանության նախարարություն,<br>ՀՀ առողջապահության նախարարություն,<br>ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն | - | Վտանգավոր նյութեր ներգրավող խոշոր վթարների ռիսկերի վերահսկմանն ուղղված Եվրահամայնքի օրենսդրության և նրա կիրառման վերաբերյալ դասընթաց<br>(7 օր /2008թ.) | Խորհրդատվություն |

*8.3 Քաղաքականության համապատասխանեցում*

| 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|---|
| NN ը/կ | Միջոցառում | ԵՄ իրավական աղբյուր | Պատասխանատու մարմին | Ներկայացման ժամկետ | Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր) | Տեխնիկական աջակցություն |
| | | | *2007* | | | |
| 2. | «Քաղաքացիական պաշտպանության և աղետների ռիսկերի նվազեցման բնագավառում միջազգային համագործակցության Հայաստանի Հանրապետության ազգային ծրագրի մշակում (2 տարվա ընթացքում, 2007-2008թթ.) և կառավարության հաստատմանը ներկայացում: | «Քաղաքացիական պաշտպանության բնագավառում կենտրոնական և արևելյան Եվրոպայի թեկնածու երկրների և Կիպրոսի հետ համագործակցության մասին» 1999թ. դեկտեմբերի 9-ի Եվրամիության Խորհրդի և Խորհրդի հովանու տակ անցկացված անդամ երկրների կառավարությունների ներկայացուցիչների հանդիպման թիվ 1999/C 373/02 բանաձև | ՀՀ արտաքին գործերի նախարարություն, (ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն) | 3-րդ եռամսյակ | 120 | Խորհրդատվություն, փորձաքննություն |